



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԳ Տարի - ԾԳՈՍՏՈՍ 1938

14^{me} Année - Août 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Բարեկամ	Յ. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Սուրբերուն նման ըԼԼԱԼ	Թրգմ. Ն. Մ.
Խաթոցին օրհնութիւնը	Վեր. Ն. Սալիպեան
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Մեծ մեղա-	
ւորի մը դարձը — Նախ ներել պէտք է — Բրոֆէսոր Մօրսէ	
— Լուրջ ազդարարութիւն մը ծնողաց — Աստուծոյ դար-	
մանալի ճամբաները	Հաւաքեց՝ Վեր. Ժ. Կ. Պ.
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Մայրիկիս յուշարձան	Սառա Պօյաճեան
ՀՍԿՈՒՄԻ ՊԱՀԵՐ — Մեկուսացում	Սամուէլ Պ.
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Անհատ հաւատացեալը	
եկեղեցիին մէջ	Scoffieldէն
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ	
ընտանիքէն	Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
ՊԱՏԱՆԵԱՅ — Սամուէլ Մօրիս	Թրգմ. Գ. Պարսամեան
ՄԱՆԿԱՆՑ — Վաղանձի թղթակցութիւն	
ՉԱՆՈՉԱՆ ԼՈՒՐԵՐ	
ԵՐԳ — Քեզի փառք պիտի տամ	Յ. Ն. Ղ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը Թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու սրաշաղթաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնտի ճշմարիտ «Բանջին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէյլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
Բրօք. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ



ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնող գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, որիչ յօդուածներու տեղ առջու համար:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԴԻՆՆ Է —

Ֆրանսա 25 Ֆրանք, Սուրիա 20 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր

ՀԵՏԵԿԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
Իսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

ԲԱՆԲԵՐ

Արթնցի՛ր դուն
որ կը քննաս, ես
կանգնեմ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ռարեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1938

ԹԻԻ 8



Ի՞նչ են հատատացեալները

ԲԱՐԵԿԱՄ

Դուք իմ բարեկամներս էք:
Յովհ. Ժե 14

Երկու ամսուան ընդմիջումէ մը յետոյ, կրկին կը շարունակենք պատասխանել մեր սկսած հարցման: Ի՞նչ են հատատացեալները: Այս օրուան մեր պատասխանն է, Քրիստոսի բարեկամները:

Բարեկա՛մ, ի՞նչ հնչիւն բառ: Մեղեգիական բառեր են, մա՛յր, հա՛յր, եղբա՛յր, քո՛յր, զա-ւա՛կ: Ասոնց կարգին կը հնչէ նաեւ բարեկա՛մ բառը: Ասոնց բարեկամ բառին խոր ստուգաբանութեան մտնելու, առանց զայն քննելու տարբեր տարբեր ազգերու ու ցեղերու տեսա-կէտովը վերլուծելով այդ սէրը յորջորջող բառը և անոր ետեւը թաքնուող հոգեբանական ար-ժէքը, ըսենք թէ հայ լեզուն երկու անձերու մէջ գտնուող այդ հոգեբանական խորհուրդին որոշ նշանակութիւն մը և ուղղութիւն մը կուտայ: Բարեկամ: Բարեկամը այն է, որ իր սիրոյն առարկայ եղող անձին միայն բարին կը կամե-նայ: Ամեն խօսքի, ամեն գործի, ամեն շար-ժուածքի մէջ բարեկամեցողութիւն մը: Իւրա-քանչիւր տեսակցութեան մէջ սրտի խոր սիրոյ հոսանք մը կը գոյանայ մէկէն միւսին, իւրա-քանչիւր բաժանման առթիւ բարի հետեւանքնե-րու մաղթանքներով առ լի և տեսութեան յոյսե-րով զօրացած:

Առջեւս ունիմ երկու բարեկամներ: Անմիջա-պէս կը տեսնես իրենց բարեկամ ըլլալը: Զար-մանալի նմանութիւն ունին իրարու: Ի՞նչ որ մէկը իր վրայ տարբեր կը տեսնէ միւսէն, կար-ծես ջանք կ'ընէ անոր նմանելու, որպէսզի ամեն

բանով անոր նման ըլլայ: Ա՛լ չեմ խօսիր անոնց արտաքին հազուատներու գոյնին և նոյնաձեւու-թեան մասին, բայց անոնց շարժումներու, խօսքի և բառերու ու ոճի ընտրութեանց, շեշտին մէջ իսկ կատարեալ նմանութիւն մը կայ: Նմանու-թիւն կայ նաեւ իրենց նկարագրին մէջ: Կը կարծես թէ մէկ հոգի մը կը խօսի երկու անձերու մէջէն: Անոնցմէ մին, հազիւ խօսք մը կը խօսի, շարժում մը կ'ընէ, միւսը արդէն կ'զգայ և զիտէ իր բարեկամին նպատակը: Դիտէ նոյնիսկ անոր տրամադրութիւններն ու միտքը: Անձանօթ, մութ, խրթին, անթափանց բան մը գոյութիւն չունի անոնց երկուքին միջեւ: Անոնց շատերն իսկ նոյնացած են:

Բարեկամին ներքին բոլոր յեղաշրջումները ինքն է որ կը կրէ անոր հետ: Անոր սրտի բա-բախումները իրեն սրտին բաբախում կուտան, անոր յուզումները զինք կը յուզեն, անոր ցաւը ինք նոյնքան խոր կ'զգայ և անոր արցունքը իր աչքերէն արտասոււնքներ կը հոսեցնէ: Անոր ուրախութեան վրայ կրկին կ'ուրախանայ, անոր զաղտնիքը իր ամենաթանկագին զանձն է: Երկու բարեկամներ ո՛չ միայն իրարու կը նմանին, ո՛չ միայն իրենց շահերը հասարակաց են, այլ իրենց ներքին սրտովն ալ նոյնացած են:

Այս է պատճառը որ, բարեկամը հազիւ թէ փափաք մը յայտնէ, խնդրանք մը ունենայ, ինքը պատրաստ է դրականօրէն պատասխանե-լու անոր, քանզի միշտ թարմ է անոր համար կենալու, անոր փաստին կայնելու, անոր ծա-

ռայելու, զայն պաշտպանելու, անոր համար նոյնիսկ մեռնելու: Անոնք իրարու համար կ'ապրին և պատրաստ են նաեւ իրարու համար իրենց կեանքը տալու:

Յիսուս այսպիսի բարեկամութիւն մը կը մատնանշէ, երբ կ'ըսէ, դուք իմ բարեկամներս էք: Անիկա մեր ներկայացուցած բարեկամութեան նշանակութեան անդին ալ կ'անցնի. երբ կ'ըսէ «ո՛չ թէ դուք Ձիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրեցի»: Բարեկամները երկուստեք զիրար կը գտնեն: Քրիստոսի բարեկամութեան մէջ գտնողը, զոհողը, սորվեցնողը, կրթողը ինքն է: Բայց զանոնք այդ կրաւորական վիճակին մէջ չթողուր նա, ընդհակառակը կը մեծցնէ և չափահասութեան կը բերէ, որպէսզի հաւատացեալը Անոր բարեկամն ըլլայ բարձրագոյն նշանակութեամբ և Անոր մտքին համաձայն:

Հիմա որ զայն իրեն բարեկամ ըրած է, կը մտերմանայ Անոր և հաւատացեալին պատահութիւն կուտայ զինքը ճանչնալու: Պօղոս առաքեալ այդ մտերմութեան պայծառ հորիզոնին առջեւ կայնած, կը հիանայ Անոր վրայ, կ'ուզէ ճանչնալ զայն, Անոր յարութեան զօրութիւնը և Անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը, վնաս սեպելով ամեն ինչ որ իրեն շահ կրնար ըլլալ՝ մի միայն Քրիստոսը շահելու և Անոր մէջ գտնելու նպատակաւ: Անոր մէջ գտնուիլ ըսել է Անոր բարեկամն ըլլալ: Ու Տէրը իր ծառային ցոյց տուաւ զաղտնիքներ իր անձէն և իր թագաւորութենէն, որոնց տեղեակ ըլլալէ յետոյ առաքեալը սկսաւ դեսպանութիւն ընել Քրիստոսի կողմանէ, հաշտեցնելու մարդիկը Աստուծոյ հետ:

Բա՛ղցր բարեկամութիւն: Հոն մութ անկիւն չկայ, սխալ հասկացողութիւն և տխուր անակընկալներ չկան: Հոն ամեն ինչ սուրբ է, ամեն ինչ վճիտ, ամեն ինչ բարի և բարիի գործակից: Հոն մտերմութիւնը անշահախնդիր և կատարեալ է: Բարձր է մարդկային մտերմութենէն: Բարեկամութիւն մըն է երկնային, Աստուածային:

Երեքուկէս տարիներէ ի վեր աշակերտներուն հետ քալեց, բայց առաջին անգամ վերջին Հինգշաբթի իրիկունը այս խորհուրդը ներկայացուց անոնց թէ ինք բերած զրած է զանոնք այն տեղը, որպէսզի անոնք իր բարեկամներն ըլլան ու երթան և պտուղ բերեն, և անոնց պտուղը մնայ: Տէրը այս խօսքը կը ներկայացընէ անոնց՝ ակնարկելով Պենտեկոստէէն յետոյ անոնց ունենալիք բեղմնաւոր կեանքը: Պտղաբեր կեանքը չափահասութիւն ըսել է և Քրիստոսի


մտքին մէջ պտղաբերութեան չափանիշը այս է. «Որպէսզի իմ անունովս ինչ որ Հօրմէն խնդրէք, ձեզի ապա հմր. 16:

Ուրեմն ասկէ կը տեսնուի թէ բարեկամութիւնը — չափահասութեան վիճակը, հօրը հետ ունենալիք բարձրագոյն — իմա մտերիմ — իմա ճիշդ և ուղիղ յարաբերութեան մէջ կը կայանայ: Տէրը միշտ այդ դիրքին մէջ կը գտնուէր, այնպէս որ ինչ որ Հօրմէն կը խնդրէր, կ'առնէր: Մեզի համար ալ ուղիղ կը յարաբերի Հօրմէն խնդրելու առանձնաշնորհը, քննէ Յովհ. ԺԴ 13, Մատթ. ԻՍ 22, Մարկ. ԺԱ 24, Յակ. Ա 5, Ե 16, Յովհ. Ե 14, բաղդ. Յակ. Դ 2, 3:

Շահաւէտ է դիտել թէ սէրը կը բղխի Հօրմէն (հմր. 9) և կը հասնի Որդւոյն միջոցաւ անհատ հաւատացեալներուն, որոնք անհատապէս կապուած են Անոր այդ սիրոյ կապերով: Սակայն ուշադիր ըլլանք որ նոյն ինքն երկնային այդ սիրոյ կապը բնական բերումով թափանցելու է նաեւ հաւատացեալէ ի հաւատացեալ: «Այս է իմ պատուէրս, որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի»: Ու այս խօսքէն այնպէս կը հետեւի թէ Քրիստոսի բարեկամութիւնը որոշ յարաբերութիւն մը ունի եղբայրներու հանդէպ հաւատացեալներու ունեցած սիրոյն հետ, ուրիշ խօսքով հաւատացեալներու մէջ գոյութիւն ունեցող սէրը անոնց Քրիստոսի բարեկամ ըլլալու պայմաններէն մին է: Շատ անգամ կ'ըսենք մեր զաւակներուն, «Քեզի հետ բարեկամ չեմ կրնար ըլլալ, եթէ դուն սիրով չվարուիս քու եղբայրներուդ և քոյրերուդ հետ»: Այս ըսելու ատեն, մեր սիրալը չենք գոցեր այդ զաւակին հանդէպ, բայց ցոյց կուտանք մեր տրտմութիւնը անոր անտեղի արարքին համար և կ'ըսենք թէ անոր սէրը եղբայրներու հանդէպ, մեր սրտին գուրգուրանքի թելերը պիտի շարժէ իրեն հանդէպ:

Մենք իրաւ մարդ ենք, սահմանաւոր, և Տէրը մէն տարբեր զգացումներով և սիրով, բայց կ'արժէ մեր առջեւ ունենալ Յովհ. ԺԴ 9—17 համարները և լրջօրէն կշռել եղբօր հանդէպ մեր մէջ գտնուած սիրոյ չափը: Քանզի բոլորովին ճշմարիտ է առաքեալին խօսքը, «Ան որ իր եղբայրը չսիրե՛ր՝ զոր կը տեսնէ, զԱստուած զոր Հոնաներ, ի՞նչպէս կրնայ սիրել»: Մտածենք, և որքան խորունկնանք այդ սիրոյն մէջ, նոյնքան աւելի բարեկամ պիտի ըլլանք Յիսուսի և մեր կեանքովը հաստատենք Անոր պատուական խօսքը, Դուք իմ բարեկամներս էք:

Յ. Ն. Ղ.





ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՆՄԱՆ ԸԼԼԱԼ

«Ինծի նմանող եղէք, եղբայրներ»:
ՓԻԼ. Գ. 17, 19

Այս խօսքը հիմնուած է պայմանի մը վրայ, զոր Առաքեալը ուրիշ խօսքով մը կը ներկայացնէ Ա. Կոր. 11, 1ի մէջ՝ «Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի»։ Այս պայմանը ակնարկելով, Պօղոս կը թախանձէ իր ընթերցողները որ իր կեանքը ընդօրինակելու մէջ իրարու հետ մրցին։ Կարծես ըսել կ'ուզէ «Իմ նկարագրիս մէջ ինչ որ կը տեսնէք որ Քրիստոսի նման է, նոյնը ձեր նկարագիրներուն մէջ թող երեւնայ»։ Անոր այս խորհուրդին մէջ որեւէ վտանգաւոր ինքնահաւա-
նութիւն գոյութիւն չունի, այլ սուրբ վստահու-
թիւն մը իր Տէրոջ հետ վայելած սերտ մտեր-
մութեան նկատմամբ։ Առաքեալը կատարելա-
պէս կը հասկնար թէ ոչ մէկը կարող էր Տէրոջը հետ մտերիմ յարաբերութիւն վայելել առանց Քրիստոսի վայելչութենէն զէթ փոքրիկ մաս մը ստացած ըլլալու։ Թերեւս ան չէր գիտեր թէ իր երեսը կը փայլէր ու կարելի է իր կեանքին մէջ իր Վարդապետին նմանող բանի մը գիտակից չէր, սակայն ուրիշներ անտարակոյս Տէրոջ նմա-
նող գիծեր պիտի նշմարէին իր վրայ։

Մարդիկ դժուարաւ կը գտնեն իրենց ուրիշ-
ներու հետ ունեցած նմանութիւնը։ Երբեմն կ'ը-
սենք թէ այս ինչ տղան ճիշդ իր հօրը կը նմանի,
բայց որդին անկարող է նշմարել իր մէջ իր հօրը
նմանող գիծերը։ Նոյնը ճշմարիտ է նաև ամենա-
բարձր առնչութեանց՝ հոգւոյն ազգակցութեան
մէջ։ Եթէ մենք Տէրոջը բարեկամներն ենք, ան-
պատճառ Անոր պատկերին պիտի փոխուինք,
հոգ չէ թէ աս շնորհալի կերպարանափոխու-
թեան գիտակից ըլլանք թէ ոչ։ Ուստի Պօղոս
Առաքեալ, որ գիտէ թէ իրեն համար ապրիլը
Քրիստոս է, ասպարէզ կը կարգայ իր ընթեր-
ցողներուն, որպէսզի անոնք իր նկարագրին հոգե-
ւոր գիծերը ուսումնասիրելով, անոնց հետամուտ
ըլլալու և Քրիստոսի նմանողութիւնը իրենց
նկարագիրներուն մէջ ալ ի յայտ բերելու
մրցակցին։

«Ու նախցէք անոնց որ այնպէս կը քալեն,
ինչպէս մեզ ձեզի օրինակ ունիք»։ Զկայ բան մը
որ մեզ հոգեւորապէս այնքան կ'ոգեւորէ, որքան

ազնիւ այրերու և կիներու օրինակ։ շարունակ
մեր աչքերուն առջեւ։ Ինչ բանի վրայ որ մտա-
ծենք, զայն մեզի կիւրացնենք։ Մեր աչքերը
առարկաներ զանազանող զործարաններ չեն
միայն, այլ նաև ընդունելու միջոցներ։ Ինչ որ
կը դիտենք, մեզի սեփականութիւն կը դառնայ։
Հոգեւոր կեանքի մէջ ասիկա ամենէն հաստա-
տուն օրէնքն է։ Երբ բարի բանի մը վրայ կը
հիանանք, մեր աչքերը անոր բարութիւնը կը
ծծեն ու զայն մեր էութեան մէջ ընդունելով,
մեր անձին մէկ մասը կը կազմէ։ Նոյնը ճշմարիտ
է գեղարուեստներու, զրականութեան ու կրօնքի
նկատմամբ։

Աշակերտը շարունակ իր ուսուցչին վրայ
մտածելով, զայն իր նկարագրին մէջ կ'ընդունի։
Ուրեմն աղէկ է որ մեր հոգիներուն աչքերը
սեւեռենք Պօղոսի, Տիմոթէոսի ու Եպափրոդի-
տոսի վրայ, որպէսզի անոնց ազնուութիւնը մեզի
փոխանցուելով, Տէրոջը փառքովը շրջապատ-
ուինք։ Դարձեալ աղէկ է որ ամէն մէկ քրիստոն-
եայ իր մօտ ունենայ մեծ ու փառաւոր կեանքի
մը կենսագրականը, զօրաւոր ու գեղեցիկ կեանքի
մը նկարագրութիւնը, կեանքի մը, որ անընդհատ
հաղորդակցութեան մէջ գտնուած է իր երկնային
թագաւորին հետ։ Այս կարգի զաղափարական
յարաբերութիւններ մեզի ներդաշնակութիւն
կ'ընծայեն ու մեր միտքերն ու սիրտերը կը
տպաւորուին անոնց հոգեւոր կեանքովը։ Վասնզի
շատերը կը քալեն, որոնց համար շատ անգամ
ձեզի կ'ըսէի, և հիմա լալով ալ կը զրուցեմ,
այսինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն հա-
մար»։ Առաքեալը արտասուներով կը զրէ այս
խօսքերը։ Իր Փրկչին սիրոյն համար բանտար-
կուած ծերունիի մը արտասուներն են անոնք։
Նեղութիւնները կարծրացուցած չեն անոր սիրտը,
ոչ ալ խոժոռ ու դաժան երեւոյթ մը տուած
անոր։ Երբ քրիստոնէութիւն դաւանող անհատ-
ներու անյարատեւութեան վրայ կը մտածէ,
իր սրտմտութիւնը կ'արտայայտէ զոհաբեր ար-
տասուներով։ Այսպէս մասնակից կ'ըլլար ան
Քրիստոսի չարչարանքներուն։ Ինչպէս որ իր
Փրկիչը Երուսաղէմի վրայ լացած էր, անիկա
կուլար անհոգ ու անտարբեր անհատներու վրայ։
Աւա՛ղ որ քրիստոնեաներ յաճախ կրնան ամ-
բաստանել իրենց ընկեր քրիստոնեաները և ան
ալ հաճոյքով։ Զուարճանալով ու զուարճացնելով
կը խօսինք անոնց տկարութիւններուն, անհա-
ւատարմութիւններուն և աղտոտած հանդերձնե-
րուն վրայ։ Կը սիրենք դիտել անոնց առթած
գայթակղութիւնը, սակայն չենք լար անոնց

համար: Ուրեմն մեր խօսակցութիւնը աւելի հրահարիչ քան բուժիչ կ'ըլլայ ու կ'ասեցնելէ աւելի կը տարածէ վարակումը: Շատ աւելի լաւ է երբէք չը յիշել մեր եղբօրը մեղքը՝ քան առանց բարեխօսական արտասուներու զայն զգուշացնել:

Ինչո՞ւ համար կուլայ Առաքեալը: Կուլայ, որովհետեւ կը ճանչնայ այնպիսիներ, որոնք թէպէտեւ զիրենք քրիստոնեայ կը կոչեն, սակայն Քրիստոսի խաչին թշնամի են: Փրկարար սիրոյ և շնորհքի նուիրական անուան տակ ինքզինքնին հեշտութեան ու անսանձ ազատութեան կը նուիրեն: Կը կարծեն թէ Աստուծոյ բարութեանը ապաւինած են ու անխորհրդօրէն Անոր անսահման թողութիւնը իրենց համար է կ'ըսեն: Նոյն իսկ կը յայտարարեն թէ որչափ բազմաթիւ ու սեւ ըլլան իրենց մեղքերը, այնքան աւելի կը փառաւորութիւն Աստուծոյ շնորհքը: Սակայն անոնց այս լայնարձակ ազատութիւնը ամենաստորին վատասեռումի տեղի կուտայ, քանզի «անոնց փառքը իրենց ամօթն է»: Մենք թերեւս որ եւ է նմանութիւն չենք գտներ մեր և անոնց միջեւ, որ Քրիստոսի խաչին թշնամիները կորակուին, սակայն եթէ աւելի մօտէն դիտելու ըլլանք, պիտի տեսնենք թէ անոնց նմանելէ ազատ չենք բոլորովին: Երեւութապէս կրնանք տարբեր երեւնալ, բայց հոգին նոյնն է: Քրիստոսի անքննելի ճոխութեան գիտակցութիւնը մեզ ունայն վստահութեան չափով շնորհքի միթէ: Մեր ազատութիւնը չափազանցութեան չե՞նք տանիր: Եթէ Տէրը մեզի Իր շնորհքին գերադրական փառքը յայտնած չըլլար, պիտի չվախնայի՞նք այդպէս ընելէ: Չկա՞ն մեղքեր զոր երբէք պիտի չգործէինք, եթէ մեր Փրկչին սիրոյն անյատակ խորութեանց չապաւինէինք: Այսպէս Քրիստոսի խաչը կը գործածենք մեր մեղքերուն մէջ ապահով զգալու: Քրիստոսի խաչին հաստատել կուտանք ինչ որ ան կործանելու որոշուած էր: Եթէ մեզի համար մեռած չըլլար, թերեւս աւելի մաքուր ըլլայինք, սակայն մեռնելով անսահման սէր մը ցուցուց մեզի, ուրեմն կը խորհինք թէ ալ կրնանք ուտել, խմել ու մեղանչել, քանզի Անոր սէրը մեզ կործանման պիտի չմատնէ: Ամէն անոնք որ այսպէս կը մտածեն, Քրիստոսի խաչին թշնամիներն են: «Որոնց վերջը կորուստ է»: «Որոնց փառքը իրենց ամօթն է»: «Որոնք միայն երկրաւոր բաները կը մտածեն» Այո, երկրաւոր են ու երկրի վրայ կը սողան: Քրիստոնեայ կ'անուանուին սակայն Քրիստոսի Հոգիէն բոլորովին զուրկ են: Անոնց կեանքի հա-

կումը դէպի վեր չէ, այլ դէպի վար: Ոչ երկնային բաղձանքներ, ոչ հոգեւոր նպատակներ, ոչ փառաւոր երկինք ու ոչ ալ ոսկեգօծ հորիզոն մը ունին: Կեանք մը, որ թռչելու թեւեր չունի, «երկրաւոր»: Ու քանի որ չթափանցեր մեր օրհնեալ Փրկչին մահուան զաղտնիքին մէջ, բոլորովին զուրկ է նաեւ Անոր յարութեան զօրութեանէն:

Թրքմ. Ն. Մ.

ԽԱՅԹՈՑԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Բ կոր. ԺԲ 1-10



Շատ մը գեղեցիկ ծաղիկներ փշոտ են, փուշը ծաղիկէն չեն կրնար զատել: Բնութեան մէջ եղածին նմանն է նաեւ կեանքի մէջ: Շատ մը քաղցր ուրախութեանց նախորդող տառապալից օրերուն համար Աստուծոյ փառք ըլլայ: Փուշերուն զոյութեան համար փառք: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուն վրայ պիտի պարծենամ»: Քանի քանիներ խայթոցին պատճառաւ ամենէն քաղցր երգերը զրած են և ամենէն ազգու աղօթքներ ըրած: Մենք եւս նոյն բաները կրնանք ընել: Ի՞նչպէս: Ի՞նչպէս որ Առաքեալը ըրաւ:

1. Խայթոցին առիթ տուող պարագան.— Պօղոս Առաքեալի փորձութիւնները շատ էին, բայց այս խայթոցը անոնց ամենէն մեծն էր: Անիկա իր դարձէն ութը տարի յետոյ մինչեւ երրորդ երկինքը յափշտակուեցաւ. մարմինով թէ հոգևով չգիտեր, բայց այնպիսի դէպք մըն էր պատահածը, որ չկրնար ըսել թէ «Հոգիով յափշտակուեցայ». անշուշտ բոլորովին հոգևով գոցուած վիճակով մը վեր առնուեցաւ: Եւ ինչո՞ւ առնուեցաւ: Որպէսզի ա. տեսիլք (տեսածը) և բ. յայտնութիւն (լսածը) ունենայ: Տեսիլքներու մասին բան մը չըսեր, իսկ յայտնութեան մասին ըսածը սա է որ անոնք «չպատմուելու խօսքեր են, զորոնք մարդու արժան չէ խօսիլ»: Քանի որ Առաքեալը այս մասին մեզի բան մը չկրնար պատմել, անոր այս փորձառութեան մեզի ի՞նչ օգուտ կայ, ի՞նչ օգուտ: Անոր այս փառաւոր փորձառութեան յետոյ զրած նամակները և թուղթերը, զրութիւններն ու սերտողութիւնները, այդ դէպքին իւղովը օծուած են: Տեսիլք մը հաւատացեալը իր եղած տեղը չձգեր, հապա զայն աւելի կը բարձրացնէ: Նայեցէք Երեմիայի, Եզեկիէլի, Դանիէլի, Պօղոսի, Յովհաննէսի, Ճան Պրնեանի և ուրիշներու, մի մոռնաք թէ երկնային տեսիլքը, Աստուծոյ ներկայութեան լեցու-

նութիւնը և Աստուածային փորձառութիւններ, այս մարդիկը աւելի երկնաւոր և պակաս աշխարհային ըրած են: Քեզ ալ այսպէս կրնան ընել:

2. Խայթոցին տեսակը.— Ի՞նչ էր այս խայթոցը: Արագ և դիւրին պատասխան մի տար, վասնզի չես կրնար: «Մարմինի խայթոց» կ'ըսէ: Ուրեմն կրնաս ըսել մարմինի յատուկ անհանգստութիւն, փորձանք, պատիժ, տրտմութիւն, փափաքներ, հիւանդութիւն, տկարութիւն ևայլն: Տես թէ շատեր ինչպէս մեկնած են. ա. Մարմնաւոր փափաքներ, ք. դարձին Աղեքսանդրոս, զ. նեղութեան և հալածանքի չարչարանքները, Ղ. դարձին առաջ Պօղոսի ըրած հալածանքները, ե. անհաւատութիւն կամ յուսահատութիւն, զ. աչքերու տկարութիւն, է. լուսնոտութիւն, ը. մալարիայի հիւանդութիւն, ևայլն: Առաքեալը Գաղատացոց «իր մարմինին տկարութիւնովը Աւետարանը կը քարոզէ», և կը գրէ թէ այս բանը իր աչքերուն ազդած էր. ուրեմն թերեւ շիտակ պիտի ըլլար ըսել թէ անիկա մալարիայի հիւանդութիւնը ունէր: Ինչ որ ալ ըլլայ սա կէտը որոշ է թէ այս խայթոցը մարմինի խայթոց մըն էր, և սաստիկ խայթոց մըն էր:

3. Խայթոցին ալիքները.— «Սատանայի հրեշտակ մը», ուրեմն սատանան է: Սատանան այս խայթոցին մէջ հրեշտակ մը և այն ալ իր հրեշտակը զրկած կ'ըլլայ: Բայց ո՞վ տուաւ այս խայթոցը Պօղոս Առաքեալին, Աստուած թէ սատանան. սատանան, բայց Աստուծոյ թոյլտուութեամբը: Սատանան բոյնը կը փլցնէ, բայց Աստուած ալ թռչունը կը փախցնէ (կ'ազատէ): Սատանան փոճկը կը կոտրէ, սակայն Աստուած միջուկը կը վերցնէ: Յաւը ինքն իր մէջ օրհնեալ է: Մի խորհիր թէ քանի որ ցաւը կրնայ օրհնութեան պատճառ ըլլալ, ուրեմն ցաւը ինքն իր մէջ օրհնեալ բան մըն: Նոյնպէս մի խորհիր թէ քանի որ ցաւը օրհնութեան պատճառ չըլլար, ուրեմն անոր մէջ օրհնեալ բան մը չկայ:

4. Խայթոցին տրուելուն պատճառը.— «Որ չըլլայ թէ ես հպարտանամ»: Հոգեւոր կեանքի մէջ, հաւատացեալներուն համար հպարտութեան չափ դէշ բան չկայ: Հոգեւոր մը որ սովորակապէս աւելի կարողութեան, հոգեւոր առանձնաշնորհումներու և օրհնութեանց մէջ միջոց կ'ըլլայ, կրնայ հպարտանալու կարելիութեան մէջ գտնուիլ: Հպարտութիւնը կուգայ երբ մենք այլեւս չենք կրնար կառավարելու հաւասարա-

կշռութիւնը պահել: Հպարտութիւնը մեր վրայ կուգայ և անմիջապէս Աստուած կը միջամտէ ու մեզ կ'արթնցնէ: Նա մեզ իր զրկած չարչարանքներով կը հաստատէ: Բարձր շէնքերուն հիմերը միշտ խորունկ կ'ըլլան: Պօղոս Առաքեալ բնականէն աւելի որքան շատ կարողութիւններ ունէր...: Աստուած իր այս բարձր շէնքին հիմը խորունկ նետել ուզեց և խայթոցը զրկեց: Ամէն հաւատացեալ ունի իր խայթոցը, իր փորձութիւնը ու չարչարանքը, քանզի անոնց պէտք ունի: Անոնց համար Աստուծոյ փառք ըլլայ:

5. Խայթոցին արգելքը.— Առաքեալը անոր համար ի՞նչպէս աղօթք կ'ընէ. երեք անգամ կ'աղօթէ: Ա. Չարչարանքին համար կ'աղօթէ: Պօղոսի համար մեծ եղած նիւթ մը Աստուծոյ համար պզտիկ չէր կրնար ըլլալ: Բ. Վճռական կ'աղօթէ: Միայն խայթոցին համար կ'աղօթէ: Ան որ ամէն բանի համար խառն կ'աղօթէ, ոչ մէկ բան չկրնար առնել: Գ. Անկեղծ կ'աղօթէ: «Աղաչեցի» կ'ըսէ: Դ. Առանց ձանձրանալու, եւ կամ ըսենք ձանձրացնելով կ'աղօթէ: Երեք անգամ Յիսուսի Գեթսեմանիին մէջ ըրածին նման: Հօրը, Որդւոյն և Սուրբ Հոգւոյն անունով: Յետոյ Յիսուս երեք բաներ ըսած էր. խնդրեցէք, փրկուողեցէք և դուռը զարկէք: Խնդրել և փախչիլ ապարդիւն կը մնայ: Փնտրել ու յետոյ թռչնալ ապարդիւն կը մնայ, բայց երկինքը ձանձրացնել՝ ամէն բանը վար կ'իջեցնէ: Ե. Տէրովը աղաչելով կ'աղօթէ: «Տէր» անունը Յիսուսի չարչարանքի տիտղոսն է: Նա մեր չարչարանքները կը համկնայ: Զ. Մասնայատուկ կ'աղօթէ: «Որ մէկդի ընէ ինձմէ» կ'ըսէ: Շատ յաճախ կը մտածենք թէ՛ եթէ այսինչ կամ այնինչ բանը վերցուի, Աստուծոյ համար աւելի օգտակար անձեր կրնանք ըլլալ: Ասիկա սխալ է: Շատ մը բաներու մէջ Աստուծոյ կամքին անտեղեակ ենք: Ուրիշ բաներ ալ կան, որոնց մէջ Անոր կամքը զիտենք: Բայց շատ մը չգիտցած բաներնու մէջ Աստուծոյ կամքը կը հասկնանք և կը սորվինք երբ անոնց մէջէն կ'անցնինք:

6. Խայթոցին օգուտը.— «Իմ շնորհքս հերիք է քեզի... Իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի»: Ամէն աղօթք կը պատասխանուի, բայց ոչ միշտ ինչպէս որ մենք կ'ուզենք: Աստուած Պօղոս Առաքեալի խայթոցը չվերցուց, բայց համբերութեան համար զօրութիւն տուաւ: Երանի՛ գիտնայինք թէ մեր փուշերը օր մը կոկոններ մէջտեղ պիտի բերեն և մեր ծանր բեռները թերեւս պիտի փոխուին: Մի մոռնար,

նորէն կ'ըսեմ, եթէ Պօղոսի խայթոցը չըլլար, Եփեսացւոց և Կորնթացւոց գրուած թուղթերը չպիտի ըլլային: Եթէ փուշը կորսնցուցած ըլլար, անկէ ծնելիք վարդը պիտի մեռնէր, և անոր անուշահոտութիւնը պիտի կորսուէր: Նոր Կտակարանին մէջ մեզի ներկայացուած այս մեծ Առաքեալը Պօղոս՝ փուշի մը պտուղն էր. ասոր երբէք մի կասկածիր. անիկա Ստեփաննոսի նահատակութեան ծագիկն էր: Հաւատացեալին սրտին մէջ ծլող ծագիկներ՝ Յիսուսի զուլսը պսակող փուշերէն յառաջ կուգան: Պօղոս զօրութիւն խնդրեց որպէսզի յաջողութիւն ունենայ, բայց տկարութիւն տրուեցաւ իրեն որպէսզի հնազանդութիւն սորվի: Նա առողջութիւն խնդրեց որպէսզի աւելի մեծ գործեր ընէ, բայց իրեն հիւանդութիւն տրուեցաւ որպէսզի աւելի ալիք գործեր ընէ: Հարստութիւն խնդրեց որպէսզի աւելի հանգիստ ըլլայ, աղքատ եղաւ որպէսզի աւելի իմաստուն ըլլայ: Զօրութիւն խնդրեց որպէսզի մարդկային համարում շահի, տկարութեան տիրացաւ որպէսզի միշտ Աստուծոյ կարօտ ըլլալը զգայ: Ամէն բաները խնդրեց որպէսզի կեանք վայելէ, կեանքի տիրացաւ որպէսզի ամէն բաները վայելէ: Խնդրածը չառաւ, բայց յուսացածը առաւ, այսինքն իր աղօթքը պատասխանուեցաւ:

7. Խայթոցին փոխուիլը.— Տես թէ պատասխան առածին պէս Պօղոս Առաքեալ երգ կ'երգէ, (Համար 9-10): Ասիկա սրբագործուած խայթոցի մը աստիճաններուն Սաղմոսն է: Նա տառապանքի քարերէն Բեթել մը շինեց: Այն օրէն սկսեալ անոր Հարչարանքները, կարօտութիւնները, տառապանքները, սրտնեղութիւնները, տկարութիւնները և տրտմութիւնները զինքը մինչեւ երկինք տանող Սանդուխին աստիճանները եղան: Ասիկա «ա՛լ աւելի յաղթող եղաւ Անով որ զինքը սիրեց»:

Ով հաւատացեալ, խայթոցին օրհնութիւններուն համար ամէն ժամանակ փառք տուր: Բայց եթէ հիմա օրհնութիւն չես տեսներ՝ խայթոցին համար փառք տուր. օրհնութիւնը անպատճառ կուգայ, քանզի խայթոցը տուողը՝ մեզ սիրող Աստուածն է:

Վեր. ՆԱԶԱՐԷԹ ՍԱԼԻՊԵԱՆ

Մօնթէվիտէօ

Զգոյ եղիր որ Աստուծոյ քով եղածէն աւելի սուրբ չցուցնես ինքզինքդ մարդոց առջեւ: Քու ամենալաւը, ամենաբարձրը եւ ամենախորդ թող միայն Անոր յայտնի ըլլայ:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՄԵԾ ՄԵՂԱԽՈՐԻ ՄԸ ԴԱՐՁԸ

Մեծ աւետարանիչ Մուտի անգամ մը Նիւ Եօքի բանտին մէջ ժողով մը ըրաւ և ժողովէն ետքը խուցերը մի առ մի այցելեց ու զարմացաւ թէ անոնց ամենն ալ անպարտ էին և իրենց ըսածին համեմատ ուրիշներու պատճառաւ բանտ ինկած էին: Սակայն անոնցմէ մին ըսաւ, «Իմ մեղքերս շատ աւելի ծանր են քան որ ես կրնամ կրել»: «Ուրեմն զանոնք չե՞ս ուզեր նետել մէկու մը վրայ որ կ'ուզէ զանոնք կրել»:

— Ո՞վ է ան:

— Տէր Յիսուս:

— Նա չուզեր իմ մեղքերս կրել:

— Ինչո՞ւ չուզեր:

— Քանզի ես բոլոր կեանքիս մէջ Անոր հակառակ գործած եմ:

— Բայց Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամեն մեղքէ կը սրբէ:

Աստուծոյ այս մարդը՝ այս Զախարիաուած հոգիին բոլոր սրտով աւետարանը քարոզեց, բայց մխիթարական ո եւ է խօսք մը օգուտ չըրաւ: Այսքան մեծ մեղաւորի մը փրկութիւն գործելը արդեօք տակաւին կա՞րելի էր: Յաջորդ օրը Մուտի կրկին նոյն խուցին առջեւ եկաւ, երբոր պատուհանէն ներս նայեցաւ, Աստուծոյ այն հոգիին վրայ ինչ ըրածը հասկցաւ: Բանտարկեալին երեսը կը փայլէր, անոր աչքերուն մէջ ուրախութեան արցունք կար: Այն գիշեր իր մեղքերուն ծանրութիւնը իր վրայէն վերցուած ըլլալը պատմեց ու ըսաւ «Հիմա Նիւ Եօքի մէջ ամենաերջանիկ մարդը ես եմ»:

«Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան»: Եսայ. 1 : 18:



ՆԱԽ ՆԵՐՆԷՆ ՊԵՏԻ Է

Կրօնականության հեթանոս մը միսիոնարական կայանի մը քովէն անցնելու ատեն ներս մտաւ և ժողովին ներկայ եղաւ: Նա իր հայրը մեղացող մարդէն վրէժ առնելու կ'երթար, սակայն Աստու-

ծոյ խօսքը անոր սրտին դպաւ ու միսինսարին առաջարկեց որ զինք մկրտէ: Միսինսարը անոր ըսաւ, «Եթէ դուն կ'ուզես մկրտուիլ ու փրկուիլ, պէտք է որ նախ քու թշնամոյդ ներես»: Քու խօսքդ շատ խիստ է, բայց ես անոր վրայ պիտի խորհիմ: Միսինսարը չէր յուսար թէ այս մարդը կրկին պիտի գար, բայց վերջապէս նա կրկին եկաւ, սակայն շատ անհանգիստ վիճակի մը մէջ և ըսաւ, «Ես թէ կ'ուզեմ և թէ չեմ ուզեր: Թէ կ'ուզեմ լսել և թէ չեմ ուզեր լսել»: «Եթէ դուն չես ուզեր ներել, այն ատեն անդարձ սիրտդ քու մէջդ կը խօսի, բայց երբոր ներել կ'ուզես, Աստուած քու մէջդ կը խօսի»: Ապա անոր կարդաց Յիսուսի խաչին վրայ իր թշնամիներուն թողութիւն խնդրելը ու ներելը: Կրօնականտացին բացազանչեց, «ասիկա զարմանալի բան մըն է»: Միսինսարը կարդաց նաեւ Մտեփանոսի իր թշնամիներուն համար աղօթելը: Այն ատեն Կրօնականտացին նորէն գնաց, սակայն շատ չի տեսեց փայլուն դէմքով կրկին եկաւ և ըսաւ, «չիմա երջանիկ եմ, սրտիս մէջ ատելութիւն չմնաց, ես ներեցի»:



ԲՐՈՓՖԵՍՐ ՄՕՐՍԷ

1872ին Նիւ Եորքի մէջ վախճանեցաւ Բրոֆ. Մօրսէ որ զիծերէ ու կէտերէ բաղկացող հեռադրին «այբ» ու «բէնը» հնարած էր: Անգամ մը իրեն սա հարցումը ուղղուեցաւ, «Բրոֆէսօր երբոր Դուք ձեր փորձերովդ զբաղած էք, արդեօք կը հանդիպի՞ք այնպիսի զօռութիւններէ որոնց ելք մը չէք կրնար գտնել»:

— Այո՛, մէկէ աւելի անգամներ հանդիպած եմ:

— Կրնա՞մ հարցնել թէ այսպիսի պարագաներուն արդեօք ի՞նչ կ'ընէք:

— Ձեզի մտերմարար կը խօսիմ, այնպիսի պարագաներուն մէջ որ ի՞նչ ընելիքս չեմ գիտցած, Աստուծմէ աւելի լոյս խնդրած եմ:

— Եւ Ան Ձեզի լոյս տուա՞ւ:

— Այո՛, ձեզ կը վստահացնեմ որ երբ իմ գիւտիս համար Ամերիկայէն և Եւրոպայէն գնահատանք ընդունեցի, ղոյզն պարծանքի զգացում մ'իսկ չունեցայ: Ելեկտրականութեան մէջ կարեւոր գիւտեր ունեցայ. ասոր պատճառը իմ ուրիշներէն աւելի գիտուն ըլլալս չէր, հապա Աստուած էր որ զանոնք ինծի գտնել տուաւ, որպէսզի մարդկութեան օգտակար ըլլայ:

«Անոր նայեցան ու լոյս առին, և անոնց երեսները չամչցան»: Սաղ. ԼԴ Ծ:

“ՔՐԻՍՏՈՍԸ ՍԱՅԷՆՍ”

Բունտիթա Բամայէ Հնդկաստանի մէջ քրիստոնէութիւնը ընդունած ծանօթ անձնաւորութիւն մը հետեւեալը կ'ըսէ: «Երբ Նիւ Եորք հասայ, ինծի ըսուեցաւ թէ Միացեալ Նահանգներուն մէջ նոր փիլիսոփայութիւն մը կ'աւանդուի և շատ մը աշակերտներ շահած է: Այդ փիլիսոփայութիւնը «Քրիսչըն Սայէնս» կը կոչուի. ու երբ հարցուցի թէ անոր ուսուցածը ի՞նչ է, հասկցայ որ նոյն փիլիսոփայութիւնն է, ինչ որ իմ ժողովուրդիս մէջ 4000 տարիներէ ի վեր կուսուցուի: Ան կործանած է միլիոնաւոր կեանքեր և անչափելի նեղութիւն ու վիշտ պատճառած է իմ երկրիս մէջ»:



ԼՈՒՐԶ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԾՆՈՂԱՅ

Հողագործի մը տասնըչորս տարեկան տղան կը մեռնէր: Հովիւը կանչուեցաւ, բայց խեղճ տղան հովիւը մէկդի հրեց և իր հօրը ըսաւ, «Հայր, երբ ես մեռնիմ, կ'ուզեմ որ զիս յարգանոցին քովը թաղես ու ամեն առտու և իրիկուն երբ արջառները կերակրելու երթաս և իմ գերեզմանիս վրայ նայիս, ըսես, հոս կը պառկի իմ խեղճ զատապարտեալ տղուս մարմինը որուն հոգիին մասին իրեն բան մը չի խօսեցայ կամ երկինքի ճամբան չի ցուցուցի»:

Ո՛հ, ծնողք մը ըլլալով ի՞նչ լուրջ խնդիր մ'է և իր զաւակներուն հոգիներուն հանդէպ ի՞նչ ծանրակշիռ պատասխանատուութիւն մը կը ճնշէ իր սրտին վրայ:



ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՃԱՄԲԱՆԵՐԸ

Պատ. Եագօպ Քրէօքըր իր «Գաղտնի օրհնութեանց ճամբաները» գրքին մէջ հետեւեալը կը գրէ. «Վարպետ մը յախճապակիէ ծաղկաման մը կը շինէր, այս գեղեցիկ կտորը լմնցածի պէս կ'երեւնար, սակայն երբ զայն անգամ մըն ալ ուշադրութեամբ աչքէ անցուց, հասկցաւ թէ բանի մը չէր գար, հետեւաբար աւրեց զայն: Վարպետը անոր վրայ քանի մը փոքր կէտեր գտած էր, որոնց պատճառաւ ծաղկամանը պիտի ճաթէր երբ փուռին մէջ եփուելու դրուէր: Ուրեմն նոյն կաւը անգամ մըն ալ շաղեց և անոր ձեւ տուաւ ու անոր աշխատանքը այս անգամ յաշողեցաւ»:

Քրէօքըր շարունակելով կ'ըսէ «շատ անգամ մեզի այնպէս կ'երեւնայ թէ Աստուած մեզ

մերժած և մէկ կողմ դրած է, մեր բանի մը չի գալուն համար: Բայց մենք չենք կրնար երեւակայել թէ այսպիսի ժամերուն մէջ Տէրը մեզի որքան մօտ է: Ժ. Դարու ապաշխարութեան քարոզիչը Անթոնիուս տէօ Փատուա իր փորձութեան ժամանակէն վերջ տեսիլքի մը մէջ Քրիստոս իրեն երեւցաւ:

Հաւաքեց ժ. Կ. Պ.



ՄԱՅՐԻԿԻՍ ՅՈՒՇԱՐՁԱՆ

|||||

Աստուած յարմար սեպեց սիրելի մայրիկս մեր ակնկալածէն աւելի կանուխ փոխադրել երկինք: Ներկայ վկայութիւնով կ'ուզեմ զԱստուած փառաւորել մայրիկիս միջոցաւ մանկութենէս սկսեալ ինծի տուած հոգեւոր կրթութեան համար՝ ու նաեւ մեր ընտանիքէն և ազգականներէն դեռ անապաշխար սիրելիներուն և ուրիշներուն կրկին կոչ մը ուղղած ըլլալ Յիսուսի արիւնով եղած փրկութեան:

Մայրիկս, Հոսիսիմէ Պօյաճեան (ծնեալ Ղազարոսեան) բնիկ Սթանոսի (Էնկիւրի) էր և քրիստոնեայ ընտանիքի մը զաւակ: 16 տարեկանին իր մէջ մեծ փափաք և սէր կ'արթննայ Յիսուսի հանդէպ, ինքզինքը քննելով կը տեսնէ իր մեղքերը և կ'զգայ թէ իր այդ վիճակով Աստուծոյ հաճելի չէ: Տէրոջը յանձնուելով կ'ուխտէ այլեւս Անոր համար ապրիլ, և այն օրէն ի վեր՝ այն ատենուան առած լոյսին համեմատ կ'ապրի: Իր ամենամեծ բաղձանքը այն էր որ իր բոլոր սիրելիներն ալ Տէրը ճանչնան և Անոր յանձնուին. անդադար կ'աղօթէր որ Աստուած ողորմէր անոնց և այցելէր զանոնք:

Շատ լաւ կը յիշեմ որ երբ դեռ պզտիկ էինք, մեզ իր ծննկերուն տակ նստեցուցած Հին Կտակարանի պատմութիւններէն և Յիսուսի կեանքէն կը պատմէր մեզի: Ոչ մէկ ջանք չէ խնայած մեր հոգեւոր եւ բարոյական կրթութեան համար: Շատ մեծ կարեւորութիւն կուտար մանաւանդ ընտանեկան աղօթքին: Իր այս քաղցր սովորութիւնը հիւանդութեանը մէջ ալ կը շարունակէր՝ մեզ անկողինին շուրջը հաւաքելով՝ Աստուծոյ խօսքէն կարդալու և աղօթելու: Փառք ըլլայ աղօթքները լսող երկնաւոր Հօր որ

անպատասխանի չթողուց: Մայրս ինչպէս յաճախ ուրիշ նիւթերու մէջ՝ մեզի համար ալ ըրած իր աղօթքներուն պատասխանը մասամբ ստացաւ մեծ եղբօրս, իմ և մեր ազգականաց մէջ ուրիշ սիրելիներու ապաշխարութիւնովը: Բոլոր սրբտոմս փառք կուտամ Աստուծոյ որ ինծի այսպիսի մայր մը տալով՝ կանուխ հասակէս զիտ Իրեն առաջնորդեց:

Շատ տարիներ առաջ՝ երբ դեռ մեր բնակած արուարձանին Սէն-Լուի մէջ հոգեւոր ժողովներ չկային, օր մը վեր. Ղազարոսեան եկաւ և շաբաթամիջի օր մը որոշեց Աստուծոյ խօսքը քարոզելու: Մայրս մեծ ուրախութեամբ և սիրով մեր տունը տրամադրեց: Ամէն Հինգշաբթի Աստուծոյ զաւակներէն եղբայրներ և քոյրեր Մարտէլէն կուգային Տէրոջը պատգամը բերելու: Այս ժողովները շատ մեծ օրհնութեանց միջոց եղան տարիներու ընթացքին: Մայրիկիս փափաքն էր որ հոգի մը աւելի լսէ Աստուծոյ սիրոյն և փրկութեան վրայով, ասոր համար նա տուն տուն կը պտտէր և հոգիները ժողովի կը հրաւիրէր: Մօտ հինգ տարի առաջ երբ հիւանդացաւ ու մարմինով տկար մնաց, ալ չէր կրնար առաջուան պէս երթալ այցելել, բայց միշտ նոյն հոգիով եւ փափաքով լեցուած էր: Երբ անապաշխար բարեկամներ ու զրացիներ գային՝ կը ջանար խօսակցութիւնը հոգեւորի դարձնել Սուրբ Դիրքէն կարդալով և վկայելով, խրատելով զանոնք ալ որ հաւատքով հնազանդին և Աստուծոյ յանձնուին: Մայրիկիս մահէն վերջ զինքը շատ սիրող կին մը ըսաւ. «Երբէք չեմ մոռնար մօրդ խօսքերը և ամէն օր անոր սորվեցուցած աղօթքը կ'աղօթեմ»:

Մայրիկիս հիւանդութիւնը տեւեց հինգ երկար տարիներ, բայց միշտ անկողինի մէջ չէր: Երբեմն մարմնի ցաւերը կը սաստկային բայց դէմքին վրայ ներքին խաղաղութեան դրոշմը կը նշմարուէր. իր բերնէն երբէք տրտունջ չէր լսուէր, հապա փառք տալով կ'ըսէր. «Տէրը այսպէս կ'ամեցեր է»: Բժիշկներուն որոշումով հիւանդանոց փոխադրել ստիպուեցանք. ինքը ասոր հաւանեցաւ ըսելով, «Տէրը անշուշտ ասոր մէջ ալ նպատակ մը ունի»: Երթալէ առաջ անգամ մը եւս մեզ Աստուծոյ խնամքին և հոգատարութեան յանձնեց. ինքնիրեն համար ալ Տէրոջը առաջնորդութիւնը խնդրելով ամէն պարագայի համար, մանաւանդ Ֆրանսերէն չգիտնալուն դժուարութեանը համար: Տէրը պատասխանեց իր աղօթքին: Հիւանդանոց գացած առաջին օրը դեռատի հիւանդ հայ կին մը ժպտելով դէպի

իրեն կուգայ և կ'ըսէ. «Զիս ալ հոս ղրկեցին, վասնզի գուն ֆրանսերէն չես գիտեր»: Մայրիկս մեծ ուրախութեամբ Աստուծոյ փառք կուտայ զինք լսելուն և կ'ըսէ. «Ես աղօթած էի, Տէրը ինծի պատասխանեց»: Քանի մը օր վերջը ուրիշ հայ կին մըն ալ կուգայ, մայրս Աստուծոյ տուած պատեհութիւնը պարապի չանցնելով, կը սկսի անոնց Սուրբ Գրքէն նաև «Բանբեր»էն ու հոգեւոր թերթիկներէն կարդալ, զանոնք ալ մխիթարելով: Իրեն քով եղող ֆրանսացի հիւանդներուն ուշադրութիւնը կը գրաւէ իր ուրախ դէմքը, խաղաղ ու հանդարտ վիճակը: Ի վերջոյ կը ստիպուին հարցնել թէ ի՞նչ էր պատճառը որ իրենց պէս չի լար և չի տրտմիր: Իսկոյն Սուրբ Գրքը ցուցնելով կ'ըսէ թէ՝ Աստուծոյ խօսքին միջոցաւ է: Քանի մը ամիս յետոյ ցաւերը բաւական մեղմացած էին և զինք կրկին տուն բերինք: Տէրը մէկ տարի ալ զայն մեզի շնորհեց ու իր մայրական սէրը վայելեցինք: Բայց վերջապէս Տէրոջը սահմանած օրը կը մօտենար զինքը իր քով տանելու և այս աշխարհի ցաւերէն ու տառապանքներէն յաւիտեան հանգչեցնելու: Շատ կը սիրէր և յաճախ կ'երգէր՝

«Միս ի սէյյահ տօլաշտըմ գէմինտէ»... և կամ
«Բապպ Յիսուս գայամ օլտըգճա»... և կամ
«Նէ խօշ կիւվէնմէք Յիսուսա...» երգերը:

Վերջին շաբաթներուն մէջ որոշապէս կ'զգար որ Տէրը զինք իր քով պիտի տանէր. հաւատքին մէջ հաստատ էր մինչեւ իր վերջին շունչը ու յաճախ կ'ըսէր. «Երբ որ կանչէ, պատրաստ եմ»:

Մեռնելէն երկու օր առաջ մեզ գատ գատ և միասին իր քով կանչելով պատուիրեց որ Աստուծոյ սիրոյն մէջ մնանք ու ծառայենք, նաեւ զիրար սիրենք: Մանաւանդ իր անապաշխար զաւակներէն իւրաքանչիւրին հետ ալ գատ գատ խօսակցեցաւ և իր վերջին կտակը այս եղաւ իր տկար շունչով. «Աշխարհային փուճ հաճոյքները ձգելով Տէրոջը յանձնուեցէք, ապաշխարեցէք, եկեղեցի դացէք, ահաւասիկ իմ վիճակս, կը տեսնէք թէ աշխարհի վարձատրութիւնը այս է»: Երբ մենք տրտմելով կուլայինք որ մեր սիրելի մայրը մեզմէ պիտի բաժնուէր՝ ինքը ըսաւ. «Մի՛ լաք. եթէ զիս կը սիրէք աղօթեցէք որ Տէրը օր առաջ զիս տանի»:

Սէն-Լու, Մարտէյլ

ՍԱՌԱ ՊՅԱՃԵԱՆ



Հսկումի պահեր
.....

ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

«Ու եղաւ որ այն օրերը լեռը ելաւ, ու ամբողջ գիշերը Աստուծոյ աղօթքը նետով անցուց»:

Ղուկ. 2. 12

Ես կը սիրեմ գիշերները անաղմուկ
Լըռութեան մէջ անթեղուած,
Ուր ցերեկէն խոնջած հոգին աննեցուկ՝
Կը փնտրուէ լոկ Աստուած:

Քաշուելու դուրս այս վայրերէն քաղքենի
Ուր դեռ ժըխորն է եռուն,
Թաւիշ թումբով նրբանցքներէն գեղանի՝
Տափաստանները հեռուն:

Մենաւորուիլ դըրախտայոյզ գիւղերու
Ծաղկած ձոր ու այգեստան,
Կամ մըտամփոփ խորասուզուիլ շատ հեռու՝
Անդորրաւէտ մենաստան:

Ու հոն երգել աստղերուն տակ, հոգեշունչ
Մեղեդիները քնքուշ,
Ապա խոկալ վերացումով մ'անմըռունջ՝
Երկնի խոհերը անուշ:

Կամ մագըցիլ Աստուածհայեաց, մէկուսի
Բըլուրները հոտեւան,
Ու հոն սիրտ-բաց ծունկ դնել զերթ Յիսուսի՝
Մինչեւ ծագը առտըլան:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ազատութիւն առանց կարգապահութեան՝ (զգաստութեան) կործանման կ'առաջնորդէ, կարգապահութիւն առանց ազատութեան՝ գերութեան կը տանի: Ազատութիւն զգաստութիւնով՝ նշանախօսն է իրենց Տէրոջը կապուած շնորհաց որդիներուն: «Երգ երգոց»ի իշխանուհին քալուածքն է իր բոլոր գեղեցկութեան, շքեղութեան եւ փափկութեան մէջ:



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՀԱՏ ՀԱՒԱՏԱՅԵԱԼԸ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

Լոյսի մէջ քալել. — «Եւ դուն պատուիրես Իսրայէլի որդիներուն որ քեզի ծեծուած մաքուր ձէթ բերեն Լոյսի համար որ կանթեղները միշտ վառին»: Ելից Ի՛ 20:

Զիթապտուղէն ծեծուելով վազած մաքուր ձէթը օրինակն է Ս. Հոգիին. բաղդատէ Յովհ Գ 34 և Երբ. Ա. 9: Քրիստոսի մէջ իւղով մշտատեւ լեցուած լոյսը մշտատեւ կը վառի և է աշխարհի լոյսը, Յովհ. Ը 12: «Վասնզի Աստուած Անոր չափով չտար հոգին, Յովհ. Գ 34: Ելից Ի՛ 20ը աշխարհը չէ՝ հապա տաճարը: Հոգ աշխարհի մէջ և աշխարհի մեր տալիք վկայութիւնը չէ նիւթը, հապա մեր հաղորդակցութիւնը և երկրպագութիւնը իբր հաւատացեալ-քահանաներ ամենասուրբ տեղին մէջ, Եբր. Ժ 19, 20: Տաճարին մէջ լուսոյ երկու յարկաբաժին կար, երկու լոյսեր:

1. Սուրբ տեղը լուսաւորուած ոսկեղէն աշտանակով, Ելից. Ի՛ 31-40:
2. Սրբութիւն սրբութեանցը լուսաւորուած «Շէքինա»ով Աստուծոյ յայտնուած փառքովը, Ելից Խ: Այս երկու տեղերը հիմա մէկ եղան, Էւն. Մատթ Ի՛ 50, 51, Եբր. Թ 6-8, Ժ 19-21:

Բայց այսու կարեւոր է նկատել թէ նորէն ալ դեռ կան երկու լոյսեր. 1.— «Քրիստոս, կենաց լոյսը, Յովհ. Ը 12: Հոգիին միջոցաւ լոյս սփռելով Աստուծոյ Սուրբ բաներուն վրայ, առաջաւորութեան հացին և խունկի սեղանին» վրայ: 2. — Կայ նաեւ «Շէքինա»ն որ հիմա Յիսուս Քրիստոսի ղէմքին վրայ կը փայլի, Բ. Կոր. Դ 6: Այս կրկնակի լոյսին մէջ է որ մենք իբր հաւատացեալ քահանաներ կանչուած ենք, Ա. Պետ. Բ 9: Մենք կը քալենք ոչ միայն պարզապէս այն լոյսին մէջ որ նա մեզի կուտայ՝ հապա որուն մէջ նա Ինքը կ'ապրի, Ա. Յովհ. Ա 7: Բայց ի՞նչ է «մաքուր ձէթ բերելու հրամանը»: Այն է թէ մեր մօտենալը, հասկնալը, հաղորդակցիլը և

փառաց ի փառս նորոգուիլը Ս. Հոգիին միջոցաւ կ'ըլլայ, Եփես. Բ 18, Ա. Կոր. Բ 14, 15, Բ. Կոր. ԺԳ 14, Փիլ. Բ 1, Բ. Կոր. Գ 18:

Լոյսի մէջ քալել՝ Հօրը հետ և Որդիին հետ հաղորդութեան մէջ ըլլալ է: «Ամէն բան յանդիմանուած լուսով յայտնի կ'ըլլայ», Եփես. Ե 13: Աստուծոյ ներկայութիւնը՝ երեւան կը բերէ մեղքի զիտակցութիւնը բնաւորութեան մէջ՝ և մեղքերը կեանքի մէջ, Ա. Յովհ. Ա 8—10, Իսկ Քրիստոսի արիւնը այս երկուքէն ալ մեզ սրբելու համար Աստուծոյ պատրաստած միջոցն է: Մեղքը կ'ընդհատէ, բայց խոստովանութիւնը կը վերահաստատէ Հօրը հետ և Որդիին հետ մեր յարաբերութիւնը: ԾԱ. Սաղմոսը թէեւ անձնապէս Դաւիթի մեղքին և տնտեսապէս Իսրայէլի վերադարձին պատկերացումն է՝ բայց պատկերն է միեւնոյն ատեն որ եւ է մեղանշող սուրբի խոստովանութեան, ապաշխարութեան և լեցուն հաղորդութեան ու ծառայութեան վերադառնալուն: Ահաւասիկ աստիճանները:

1. Մեղքը Աստուծոյ առջեւ լման դատապարտուած, համար 1—6:
2. Թողութիւն և լուսացում արիւնով, համար 7, առաջին մաս:
3. Լուալ, մաքրուիլ, համար 7, վերջին մասէն — համար 10, բաղդատէ Յովհ. ԺԳ 4—10, Եփես. Ե 26, Ա. Յովհ. Ա 9:
4. Հոգիով լեցուիլ ուրախութեան և զօրութեան համար, հմր. 11—12:
5. Ծառայութիւն, համար 13:
6. Երկրպագութիւն, պաշտամունք, հ. 14—17:
7. Վերահաստատուած Սուրբը Աստուծոյ հետ հաղորդութեան մէջ (ոչ իր անձին համար) հապա Սիօնի օրհնութեան համար, հ. 18, 19:

Աստուծոյ ներկայութեան մօտենալու մեր միակ արժանիքը Քրիստոսի արիւնն է, Եփես. Բ 13: Բայց միայն Սուրբ Հոգիով լեցուելով է որ կրնանք ճշմարտապէս լոյսի մէջ քալել, Եփես. Ե 18: Իսկ ընաւ ընդհատուած չունենալու միջոցն է ամէն անգամ մեղքի անմիջական խոստովանութիւն:

«Իմ մէջս կեցեք», Յովհ. ԺԵ 4: Քրիստոսի մէջ կենալ՝ մէկ կողմէն զիտցուած բայց չդատապարտուած ու չխոստովանուած մեղք չունենալ է, չունենալ որ եւ է զիտաւորութիւն որուն մէջ նա ներկայ չըլլայ, կեանքի ոչ մէկ ընթացք որուն մէջ նա բաժին չունենայ: Միւս կողմէն՝ Քրիստոսի մէջ կեցողը՝ Անոր կը տանի իր բոլոր

բեռները և Անկէ կ'ստանայ ամէն իմաստութիւն, կեանք և զօրութիւն: Քրիստոսի մէջ կենալ՝ այս բաներուն և Անոր անձին անդադար գիտակցութիւնը չէ՝ բայց այն է թէ՛ մեր կեանքին մէջ՝ մեզ Անկէ բաժնող ոչ մէկ բան չթուլատրենք:

Ասիկա մեզ կը տանի պտղաբերութեան: Յովհ. ժեի համաձայն պտղաբեր կեանք մը 3 պայմաններ ունի: 1. Մաքրուիլ. համար 2, 3 և ժԳ 10: 2. Անոր մէջ կենալ, հմր. 4: 3. Հնազանդութիւն, հմր. 10, 12:

Կայ նաեւ երեք աստիճան պտղաբերութեան մէջ: 1. Պտուղ, հմր. 2: 2. Աւելի պտուղ, հմր. 2: 3. Շատ պտուղ, հմր. 5, 8: Երբ շատ պտուղ բերենք, Հայրը կը փառաւորուի մեր մէջ: Քրիստոնէութեան փոքրագոյն բարոյականութիւններուն և շնորհներուն նմանող կեանք մը յաճախ կ'ապրին մարդիկ՝ բայց երբեք չեն կրնար, Գաղ. Ե 22, 23ի «ինն» պատիկ պտուղը կեղծել: Ուր որ այսպէս պտուղ կայ՝ Հայրը կը փառաւորուի: Փարիսեցիները բարոյականի տէր և խստապահանջ կրօնամոլներ էին՝ բայց անոնցմէ ոչ մին կրնար ըսել Քրիստոսի հետ, «Ես քեզ երկրի վրայ փառաւորեցի»: Յովհ. ժԷ 4:

Ձարչարուիլ — Այս նիւթը Ա. Պետ.ի մէջ անուշ լոյսով մը պատկերացուած է հետեւեալ կերպով.

1. Ապահովուած փրկութիւն, Ա. 2—5:
2. Աւելի մեծ փառքը Քրիստոսի գալու. ատենը, Ա. 7:
3. Քրիստոսի չարչարանքները և զալիք փառքերը, Ա. 11:
4. Այս երկու փառքերուն մէջ հաւատացեալին Քրիստոսի հետ ունեցած ընկերակցութիւնը, Բ 20, 21, Գ 17, 18, Դ 12, 13:
5. Չարչարանքին զտիչ դերը, Ա. 7, Դ 1, 2, Ե 20:
6. Թէ հաւատացեալին ներկայ համբերութիւնով չարչարուելով՝ Քրիստոս կը փառաւորուի, Դ 16:
7. Եւ թէ չարչարանքը կրթիչ է, Դ 17—19, (Ա. Կոր. ԺԱ 31, 32, Եբր. ԺԲ 5—13):

Ելից ժԵ 23—26ի Մեռայի դառն ջուրերը Տէրովը առաջնորդութեան ուղղակի ճամբուն վրայ կը գտնուին:

Անոնք կը ներկայացնեն Աստուծոյ ժողովուրդին փորձութիւնները որոնք պատժական չեն՝ հապա կրթական: «Փայտ»ը կը ներկայացնէ խաչը, Գաղ. Գ 13 որ Քրիստոսի համար անուշ երեւցաւ, քանզի անոր մէջ տեսաւ Հօրը կամքին արտայայտութիւնը, Յովհ. ժԸ 11: Երբ մեր «Մեռաներուն վրայ այս աչքով նայինք» «փայտը» ջուրերուն մէջ կը ձգենք: Հոով. Ե 3, 4:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ (353-373)

ՆԵՐՍԷՍԻ ԿԵԱՆՔԸ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԻՆ ԿՈՉՈՒԵԼԷ ԱՌԱՋ. — Ծնած է 329ին: Հայրը, Աթանազիոս, որդին էր նահատակ Յուսիկ Հայրապետին (*) և մայրը, Բամբիշ, դուստրն էր Տիրան թագաւորին: Ուրեմն Ներսէս շառաւիղն էր մօր կողմէ Տրդատ թագաւորի, իսկ հօր կողմէ Լուսաւորչի և ժառանգած էր այդ երկու ընտանիքներու բարձր ընդունակութիւնները:

Սակայն բարոյապէս աննպաստ մթնոլորտ մը կը ներկայացնէր ընտանեկան յարկը, ուր Ներսէս իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուց: Մօր կողմանէ մեծ հօր, Տիրանի արքայաւիւր պալատը մաքուր միջավայր մը չէր: Իսկ Ներսէսի հայրն ու հօրեղբայրը «Տիրանի ձեռքին տակ և օրինակին» ներքեւ ցոփակեաց երիտասարդներ եղած էին (Օրմանեան): Եւ այնքան վատահամբաւ, որ ժողովուրդը իրաւունքով աստուածային պատուհաս մը նկատեց, երբ անոնք երկուքն ալ օր մը կերուխումի և լիտի շուայտութեան ատեն շանթահար եղան:

Բնական պայմաններու նայելով՝ խամբելու էր Ներսէսի բարոյական ու հոգեւոր կեանքը իր հօր ու Տիրանի չար օրինակին ազդեցութեան տակ. մանաւանդ որ անոր հօր կողմանէ մեծ հայրը, Յուսիկ հայրապետ, շատ կանուխ բաժնուած էր իր ընտանիքէն, — Լուսաւորչի նման սուրբ ու կատարեալ նուիրումով Քրիստոսի ծառայելու դիտումով, — և զրկած իրենները իր քրիստոնէական խրատէն ու վսեմ կեանքէն ազդուելու պատահութեան:

Մեր կարծիքով սխալ էր քաջ ու անձնագոհ հայրապետին այս քայլը և Տէրը Իր «Ամէնը» չըսաւ անոր այդ զոհողութեան, եթէ ոչ անոր երկու որդիները այդքան անառակ պիտի չըլլային:

Բայց այդ ամենուն հակառակ՝ Ներսէսի բարձր ընդունելութիւնները չխամբեցան: Ասոր մեկնութիւնը հաւանաբար հետեւեալն է. — Նոյնիսկ իրենց մանկութեան անգիտակից շրջանին՝ մեծ

(*) Տե՛ս Բանբեր Յուլիս 1938:

մարդիկ աստուածատուր մղումով մը հրապուրուելէ աւելի կը խորշին գոհիկ ու ստորին օրինակներէ: Այսպէս պատահեցաւ Յովսէփի, որ իր մեծ եղբայրներուն ու Պետափրէսի կնոջ մեղսալից կեանքերը դիտելով՝ մեղքէն զզուեցաւ և ալ աւելի նուիրուեցաւ սուրբ կեանքի և Աստուծոյ: Կրնանք համարձակաբար ըսել թէ նոյնը պատահած է նաեւ Ներսէսի: Աստուած զինքը օժտած էր այնպիսի վսեմ զգացումներով, որոնք թոյլ չէին տար իրեն՝ համ առնելու գետնաքարշ հաճոյքներէն, հապա զինքը յաւէտ զէպի երկնայինը կը մղէին: Անտարակոյս այդ տեսակէտով մեծ ծառայութիւն կը մատուցանէր նաեւ սուրբ աստուածահաճոյ օրինակը իր նախնիքներուն, — Տրդատի և Գրիգոր Լուսաւորչի ու անոր որդիներուն — որոնց պատմութեան ծանօթացած էր նա հաւանաբար իր մանկութենէն: Իր հոգին նման էր անոնցիւն, ռատի աւելի կը ձգտէր նմանելու անոնց, քան թէ իր ապերասան հօրը և Տիրան թագաւորի ու անոր պալատականներուն: Անոնք, որոնք քրիստոնէական ճշմարտութիւնը պաշտպանած ու տարածած էին քաջութեամբ, նուիրումով և հրաժարելով իրենց կեանքէն, ահա անոնք էին Ներսէսի մտատիպարները և անոնց նայելով զարգացաւ անոր հոգեկան կեանքը:

Իսկ հօրը քով և Տիրանի արքունիքին մէջ իւրացուց միայն ինչ որ անհրաժեշտ էր իր փիլիքական ու մտաւոր դաստիարակութեան համար, ստացաւ զինուորական կրթանք և վարժուեցաւ պալատական նիստուկացի ու զիւանազիտական յարաբերութեանց ու բանակցութեանց: Նմանեցաւ ազաւնիներու, որոնք գիտեն զօմին մէջ ընակիլ և անկէ ստանալ իրենց կերը՝ պահելով հանգերձ իրենց ոսկեփայլ փետուրները ամբիծ ու անարատ, Սաղմ. ԿԸ 13:

Յաճախեց մեծ հաւանականութեամբ նաեւ Վաղարշապատի վարժարանը, որ հաստատուած էր Գրիգոր Լուսաւորչի կողմէն: Քանի որ մենք դեռ գիր ու գրականութիւն չունէինք, Ներսէս սորվեցաւ միայն Պարսկերէն գրել կարդալ և յունական լեզուն ու գրականութիւնը: Անտարակոյս մեծ էր հիացումը և ուրախութիւնը, երբ նա այս վերջին լեզուին մէջ այնքան յառաջ գնաց, որ սկսաւ կարգալ ու ըմբռնել Յիսուսի խօսքերը և կեանքի ու չարչարանաց պատմութիւնը Աւետարանի բնագրին մէջ:

Սակայն Ներսէս չբաւականացաւ միայն Վաղարշապատի հայ վարժարանին մատակարարած մտաւոր ու հոգեւոր սնունդով: Դ. զարոյն մէջ

Հայաստանի մօտերը կային կրթական երկու կարեւոր վառարաններ, Եդեսիա և Կեսարիա: Առաջինը կեդրոնն էր Ասորի լեզուին ու դպրութեան և եկեղեցական հայրերու, և մեծ ազդեցութիւն ունէր Հայաստանի հարաւային նահանգն ներու մտաւոր ու հոգեւոր կեանքին վրայ նոյնքան կը կատարէր Կեսարիա, որ կարեւոր կեդրոններէն մին էր յունական լեզուին, գրականութեան ու եկեղեցական կեանքին: Ուսման անյադ պապակն ունեցող հայորդիներ հարաւային Հայաստանէն Եդեսիա կը դիմէին, իսկ հիւսիսէն Կեսարիա: Աւելի ուշիմներն ու կորովիները, ինչպէս Պարոյր Հայկազն, — որ յետոյ Աթէնքի ու Հռոմի մէջ մեծ անուն հանած է իբր պերճախօս ու դաստիարակ — կը վազէին աւելի հեռուները, մինչեւ Աթէնք, — գիտութեան, գրականութեան ու փիլիսոփայութեան վառարանը:

Ներսէս ալ գնաց Կեսարիա: Թէեւ նա հազիւ 17 տարեկան էր, արդէն ամուսնացած էր՝ այն ժամանակի սովորութեան համաձայն: Իրեն հետ տարաւ նաեւ իր կինը, Սանդուխտ, Մամիկոնեան քաջագարմ տոհմէն: Ծաղկահասակ ամուլքը միասին կ'ուսանէին: Եւ հարկաւ Կեսարացուց համար սրտաշարժ տեսարան մըն էր՝ տեսնել մանկահասակ լծակիցները, որք լուրջ կրթութեան և ուսման կը նուիրէին այն օրերը, որք սովորաբար զուարճութեան կը ծառայէին» (Օրմանեան): Բայց ընտանեկան երջանիկ կեանքը միայն երեք տարի տեւեց: Սանդուխտ մեռաւ խոր սուգի մատնելով իր ամուսինը: Ներսէս մնաց ցկեանս այրի՝ իր ընտանեկան ուրախալից, բայց կարճատեւ կեանքին իբր յիշատակ պահելով իրենց մէկ հատիկ որդին, Սահակը:

Այս զէպքը, թէեւ ինքնին տխուր, բայց Ներսէսի ու եկեղեցւոյ համար օրհնութիւն եղաւ՝ համաձայն Աստուծոյ անսուտ խօսքին, որ կ'ըսէ. «Ամեն բաները բարիին գործակից կ'ըլլան անոնց, որոնք զԱստուած կը սիրեն» Հռ. Ը 28: Տէրը զինքը առով ազատեց պարտականութենէ մը, որ զէթ մասամբ արգելք պիտի ըլլար իր մեծ ու բազմապիսի գործունէութեանը:

Կնոջ մահէն ետքը Ներսէս դեռ տարի մըն ալ մնաց Կեսարիա և շարունակեց իր ուսումը: Հաւանաբար իր դպրոցական ընկերներուն մէջն էին նաեւ Բարսեղ Կեսարացին և անոր բարեկամը Գրիգոր Նազիանզացի, որոնք Ներսէսի տարեկից էին և իրենց ուսումը առած են նախ Կեսարիոյ մէջ և ապա Աթէնք, ուր իրենց ուսուցիչներէն մին եղած է մեր Պարոյր Հայկազնը:

Յոյն եկեղեցւոյն այս երկու նշանաւոր հայրա-
րապետները իրենց երիտասարդութեան օրերուն
իսկ այնքան խորունկ, նուիրեալ ու սուրբ կեանք
մը կ'ապրէին, որ եկեղեցական պատմիչ մը
ըսած է Բարսեղի մասին, «Իրաւամբ կրնանք
զովել զինքը իր բարեպաշտութեան ու բարոյա-
կան մաքուր կենցաղավարութեան համար: Իբր
երիտասարդ, երբ նա դեռ կ'ուսանէր, երկիւղով
հեռի կը մնար մեղքէ. կը ճանչնար միայն երկու
ճամբաներ, դէպի եկեղեցին և դէպի դպրոցը»:

Մեծ շնորհ մըն էր որ Ներսէս իր ուսանողու-
թեան շրջանին կեսարիոյ մէջ առիթ ունեցաւ
հաղորդակցելու այս երկու աստուածընտիր ան-
ձերուն հետ, որոնց այնքան կը նմանի հոգիով և
վեհ ձգտումով և անձնազոհութեամբ: Կրնանք
երեւակայել թէ անոնք երեքը որչա՛փ յաճախ
միասին կուգային և Սուրբ Գրոց և ուսումնասի-
րութեամբ, աղօթքով ու հոգեւոր խօսակցու-

թեամբ մէկ մէկու կ'օգնէին՝ օրէ օր աւելի
խորունկնալու աստուածային գիտութեան ու
հոգեւոր կեանքի մէջ:

Այսպէս, Ներսէս չորս տարի պատենութիւն
ունեցաւ Կեսարիոյ մէջ օգտուելու թէ ուսուցիչ-
ներէն ու թէ՛ ընկերներէն և Հայաստան վերա-
դարձաւ զարգացած մտքով, խոր հաւատքով ու
նուիրեալ սրտով: Բուզանդ Փաւստոս պատմիչը
սքանչացած և քչիկ մը Հափազանցելով այսպէս
կը գրէ անոր մասին. «Երկիւղած Տէր Աստուծմէ,
խիստ աւանդապահ հանդէպ Անոր պատուիրա-
նաց, մարդասէր, սուրբ, զգաստ, ամեն բանով
կատարեալ ամեն բանի մէջ»: Իսկ անոր արտա-
քինը կը նկարագրէ ըսելով, «Ասիկա այր էր մեծ
և բարձր և ցանկալի հասակով, վայելուճ գե-
ղով... և նախանձելի զինուորական կրթու-
թեամբ»:

Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ



ՊԱՏԱՆԵԱՑ
ՍԱՄՈՒԷԼ
ՄՈՐԻՍ
ՓՈՔՐ ՍԵՒԱՄՈՐԹԸ



Գ.

Երբ Սամուէլ ցամաքը ոտք կոխեց, առաջին
հանդիպող անցորդը կեցուց և հարցուց անոր.
«Կը խնդրեմ, պարոն, ըսէք ինծի, ու՞ր կը բնակի
Ստէֆըն Մէրիթը»:

Անիկա կը բնակէր շատ հեռուները, քաղաքին
միւս կողմը, որ նաւահանգիստէն գրեթէ չորս
մղոն հեռու կ'իյնար, շատերէն բոլորովին ան-
ծանօթ տեղ մը: Սակայն տես Աստուծոյ զարմա-
նալի կարգադրութիւնը, որ յիշեալ անցորդը,
«զորձաւորներու պիւրոյ»ի անդամ մը ըլլալով
կը ճանչնար անոր տեղը: «Մը. Մէրիթ ութերորդ
պողոտային վրայ կը բնակի ըսաւ ան, մէկ տո-
լարով կրնամ Ձեզ հոն առաջնորդել»: Սամուէլ
ընդունեց առաջարկը, հակառակ որ մէկ սու իսկ
չունէր իր գրպանին մէջ:

Ստէֆըն Մէրիթ հետեւեալը կը պատմէ.—
Անոնք եկան մեզի այն վայրկեանին, երբ ես
դուրս կ'ելլէի աղօթաժողովի մը համար: «Ստէ-
ֆըն Մէրիթը դու՞ք էք» հարցուց ինծի բարձր
ձայնով մը: «Այո՛, ես եմ», ըսի իրեն: «Իմ անունս»
Սամուէլ Մորիս է, հեռաւոր Ափրիկէէն կուգամ

Ձեզի հետ տեսնուելու և Սուրբ Հոգիին վրայով
Ձեզմէ տեղեկութիւն առնելու», ըսաւ Սամուէլ:
«Որ եւ է յանձնարարական նամակներ ունի՞ք
Ձեր վրայ» հարցուցի իրեն: «Ո՛չ» պատասխանեց,
«ես այնքան աճապարանօք էի մեկնելու որ այս-
պիսի նամակներ չխնդրեցի որ եւ է մէկէ մը»:
«Շատ լաւ ըսի իրեն, ես հիմա ստիպուած եմ
դուրս ելլել աղօթաժողովի մը համար, եթէ կու-
ղէք սպասեցէք հոս այս ժողովասրահին մէջ, ես
քիչ ատենէն կուգամ և Ձեզ կը գտնեմ ու միասին
կը խօսակցինք Ձեր նախընտրած նիւթերուն
շուրջ»:

Բայց իմ տողարս, բացագանչեց իր առաջ-
նորդը. «Ստէֆըն, Մէրիթ պիտի վճարէ իմ բոլոր
պարտքերս» ըսաւ Սամուէլ: «Իրաւունք ունի,
աւելցուցի, տողար մը երկնցնելով անծանօթին»:
Այսպէս ես գացի իմ աղօթաժողովիս և Սամուէլ
մտաւ ժողովասրահը: Բայց այդ օրը շատ զբաղած
ըլլալով բոլորովին մոռցայ իմ սեւամորթս:
Ժամը տասնուկէսին երբ տուն կը մտնէի, յան-
կարձ յիշողութեանս եկաւ Սամուէլ Մորիսը ու
անմիջապէս մտայ ժողովասրահը, ուր ան ինծի

կ'սպասէր, և ահա ի՞նչ տեսնեմ: Այդ սեւամորթը կայնած էր բարձր տախտակամածին վրայ, իր առջեւը ունենալով ծնրադիր 17 հոգիներ, որոնք Յիսուսի մասին լսելով կ'ապաշխարէին:

Այդ իրիկուան պահուն էս տեսայ Սուրբ Հոգիին յայտնութիւնը սեւամորթ Ափրիկէցիի մը մէջ. տեսարան մը որ աչքերուս առջեւէն բնաւ չբաժնուիր: Սեւամորթ մը, անվարժ, անուս, անփորձ, Ամերիկա հասնելուն առաջին իրիկունը 17 հոգի կը շահի Տէր Յիսուսի համար, ասիկա Սուրբ Հոգւոյն հրաշքը չէ՞ միթէ:

Այսպէս Ուրբաթ օրը անցաւ, Կիրակի օրը առաւօտուն ըսի իրեն, «Սամուէլ, կը փափաքիմ որ ինձի հետ գաս Կիրակնօրեայ դպրոցս և աշակերտներուս խօսիս»: «Ես բնաւ Կիրակնօրեայ դպրոց զացած չեմ թէեւ, բայց հոգ չէ, կուգամ» ըսաւ: Ես ժպտելով ունկնդիրներուս ներկայացուցի ըսելով թէ «Սամուէլ Մորիս, երիտասարդ սեւամորթ մը Արեւմտեան Ափրիկէէն կուգայ, ձեր դպրոցի տնօրէնին հետ Սուրբ Հոգիին վրայ խօսելու և ծանօթութիւններ առնելու համար»: Ընդհանուր ծիծաղ մըն է որ փրթաւ մէկէն:

Սամուէլ կայնեցաւ և իր պատգամին առաջին խօսքը որ արտասանեց, զգացի թէ Սուրբ Հոգին մեր մէջ ներկայ է: Աշակերտներս երբէք այսքան ուշադրութեամբ լարուած չէի տեսած: Որ եւ է մէկը չէր խնդար հիմա, զրեթէ բոլորն ալ կուլային. ապաշխարութեան արցունքներ էին: որ կը հոսէին, շատեր կը հեծկտային: Բոլորս ալ կը վկայէինք որ ասիկա Սուրբ Հոգւոյն արտակարգ մէկ հեղումն էր որ թափուեցաւ մեր վրայ:

Դպրոցիս աշակերտները իրենց երախտագիտութիւնը իրենց բարեկամին յայտնելու համար անմիջապէս կազմեցին ընկերութիւն մը «Սամուէլ Մորիս միսիոնարական ընկերութիւն» անունով, որպէսզի զրամ և հազուստեղէններ հաւաքելով օգնեն անոր հայրենակիցներուն Աւետարանչական գործին սատարելու նպատակաւ: Ասկէ քանի մը օր վերջը, իմ բնակավայրէս բաւական հեռուները յուղարկաւորութեան մը համար կանչուեցայ: Խնդրեցի Սամուէլէն որ ինձի ընկերանայ, և միասին ճեպընթացը նստանք: Երբ քաղաքին մէջէն կ'անցնէինք, անոր կը ցուցնէի քաղաքին զլխաւոր յիշատակարանները, հետաքրքրաշարժ վայրերը, Օփերան, մեծ պարտէզը: Յանկարծ ընդմիջեց զիս ըսելով. «Երբէք աղօթած էք կառքին մէջ»: «Ոհ, այո՞» պատասխանեցի իրեն, «և միշտ ալ օրհնուած եմ»: «Ուրեմն աղօթե՛նք» ըսաւ, իր սեւ

ձեռքովը սեղմելով ձեռքերս, ծնրադրելու համար: Առաջին անգամ էր որ կը ծնրադրէի երկաթուղիի կառքին մէջ. մեզի հետ կային նաեւ երեք ճամբորդներ:

Սամուէլ իր աղօթքին մէջ հետեւեալ կերպով արտայայտուեցաւ. «Ով Տէր, ես հեռաւոր Ափրիկէէն կուգամ Մր. Մէրիթի հետ Սուրբ Հոգիին վրայ խօսելու համար, բայց անիկա ուրիշ բաներու վրայ կը խօսի ինձի, ցուցնելով քաղաքը, մարդիկը, յիշատակարանները. մինչդեռ ես այնքան կը փափաքիմ տեղեկանալ Սուրբ Հոգիին վրայ»: Ապա իր աղօթքը վերջացուց աղաչելով որ Տէրը աւելի Սուրբ Հոգիով լեցնէ Ստէֆըն Մէրիթը, որ իրեն ուրիշ բաներու վրայ չխօսի: Իմ կենացս մէջ եղակի վայրկեան մը եղաւ ասիկա: Ասկէ յետոյ ամէն ինչ որ գրեցի, կամ ինչ որ խօսեցայ կամ քարոզեցի, միայն Սուրբ Հոգիով ու անոր օգնականութեամբ ըրի:

Դեկտեմբերի վախճանին Սամուէլ դպրոց մտաւ: Կ'արժէ յիշել հոս, դպրոցի տնօրէնին Mr Readeի վկայութիւնը Սամուէլի նկատմամբ:

«Իր դպրոց մտնելէն ի վեր, անիկա եղաւ ամենէն կենդանի և նշանակելի անձը բոլոր ուսուցիչներուն և աշակերտներուն առջեւ: Ափրիկէցի այս տղան, որ իր վրայ կը կրէ այն բոլոր նշանները, որոնք իր ցեղը կը մատնանշեն և իր ծագումը կը հաստատեն. (ազուաի նման սեւ մորթ մը, հաստ շրթունքներ, տափակ և լայն քիթ մը): Միայն իր ձայնին շեշտը մասնաւոր առաւելութիւն մը ունէր, որ յատկապէս աչքի կը զարնէր: Իր անդլերէնի արտայայտութիւնը որոշապէս կը տարբերէր ուրիշ շատ մը սեւամորթներէն և օտարներէն, որոնց կը հանդիպէինք միշտ:

«Երբ իր պատմութիւնը պատմեց մեզի, հիացանք իր վրայ, մասնաւորապէս իր Ափրիկէէն մեր այս երկիրը ժամանելուն զարմանալի առաջնորդութեանը վրայ. բայց տակաւին չէինք գիտեր այն պատուական հոգին, սեւ մորթին տակի հրեշտակը, որ ծածկուած էր այս մարդուն մէջ:

«Իր զարմացումը աւելի մեծ էր քան մերինը, ինչու որ ամէն բան իրեն համար նոր էր. մեր հազուստները, մեր կերակուրները, Ամերիկեան ձեռով սեղան նստիլը կային. բայց ասով մէկտեղ շատ շուտ սորվեցաւ լեզուն ու վարժուեցաւ մեր սովորութեանը: Ես բնաւ պիտի չմոռնամ իր այն զարմացումը, երբ առաջին անգամ տեսաւ մեր ձիւնով ծածկուած երկիրը. ճիշդ կը նմանէր Իսրայելացիներուն, որոնք երկինքէն իջնող մանաւանդ լուսնի տակ կ'եղած կը հարցնէին «Ի՞նչ է այս»: Սամուէլ քիչ մը առաւ ձիւնէն իր ձեռքին

մէջ՝ որ շուտով հալեցաւ. «Ու՞ր գնաց այս ձիւնը» ըսաւ ան, երբ տեսաւ որ միայն քիչ մը ջուր մնաց իր ափին մէջ: Շատ անգամ լսած եմ զինքը երբ կ'աղօթէր: Անիկա կը խօսէր Աստուծոյ հետ բերան առ բերան, որպէս թէ իր զէմը կեցած ըլլար: Առաւօտները շատ կանուխ դպրոցականներուն արթննալէն առաջ Սամուէլ կայնած է և կ'աղօթէ: Իրիկունները, երբ ամէն մարդ արդէն քնոյ մէջ ընկղմած է, Սամուէլ կը խօսի տակաւին Աստուծոյ հետ:

«Անգամ մը իր սենեակին կիսաբաց դռնէն տեսայ զայն ծունկի եկած և իր աչքերը դէպի երկինք դարձուցած կ'աղօթէր. կարծես իր զէմքին վրայ երկնային ճառագայթ կար. այս պահուսն անիկա այլեւս երկրի վրայ չէր, հապա երկինք յափշտակուած էր: Կրնամ ըսել թէ Սամուէլի ներկայութիւնը մեր դպրոցին մէջ, ամէն բանի մէջ օգտակար եղաւ մեզի: Նկատելի զօրութիւն մը կը հոսէր իրմէ, որմէ յաճախ օրհնուած ենք:

«Իր ընկերներէն մէկը կը պատմէ թէ յաճախ կ'երթար և կը տեսնուէր Սամուէլին հետ իր սենեակին մէջ: Անգամ մը կ'երթայ և քանի մը անգամ կը զարնէ դուռը, բայց ներս մտնելու հրաւէրը չլսեր, ուրեմն կը խորհի թէ չուզե՞ր բանալ, կամ զբաղա՞ծ էր ձօրը հետ խօսելով և չուզեր խանգարուիլ: Երբ իր աղօթքը լմնցաւ, ելաւ և բացաւ դուռը և ըսաւ իր այցելուին, «Մտէ՛ք, ինչու որ հիմա խօսակցութիւնս լմնցուցի ձօրս հետ»: Սամուէլ մեծ սէր մը ունէր իր Սուրբ Գրքին հանդէպ. ո՛չ միայն ինք կը կարդար զայն խիստ կամաց և լսելի ձայնով մը, հապա կը պահանջէր զինք տեսնելու եկող բոլոր այն մարդոցմէ, որպէսզի բարձր ձայնով զլուխ մը կարդան Սուրբ Գրքէն:

«Անգամ մը, անհաւատ երիտասարդ մը զինք տեսնելու եկաւ, ու երբ Սամուէլ խնդրեց անկէ որ գլուխ մը կարդայ իրեն, անիկա մերժեց առաքելով թէ ինք չհաւատար Սուրբ Գրքին: «Ի՞նչպէս, ըսաւ Սամուէլ, չե՞ս հաւատար Սուրբ Գրքին, չե՞ս հաւատար հօրդ երբ անիկա կը խօսի քեզի, չե՞ս հաւատար եղբօրդ, երբ անիկա քեզի կը խօսի, չե՞ս հաւատար արեգակին գոյութեան, երբ անիկա կը փայլի: Այսպէս, Աստուած քու Հայրդ է, Բրիտոս քու եղբայրդ է, Սուրբ Հոգին քու արեւդ է, պիտի աղօթեմ քեզի համար»: Սամուէլ աղօթեց անհաւատ երիտասարդին համար և անիկա Աստուծոյ շնորհքովը ապաշխարեց ու փրկուեցաւ:


«Սամուէլ շաբաթը մէկ օր ծոմ կը պահէր,

Հինգշաբթի իրիկունէ մինչեւ Շաբաթ առաւօտ. այս միջոցին որ և է ուտելիք չէր ուտեր և ոչ ալ ջուր կը խմէր, նոյնիսկ կաթիլ մը. միեւնոյն ատեն մարդոց ծոմ պահողի մը պէս չերեւակու համար այդ օրուան բոլոր պարտականութիւնները այնքան զուարթութեամբ և այնքան ուրախութեամբ կը կատարէր: Միայն սեղանի ժամա. նակ իր տեղը բաց մնալով, կարելի էր անկէ հետեւցնել իր ծոմ պահելը:

«Անիկա տեսնելով մեր երկիրը և մեր քաղաքակրթութիւնը, կը հիանար և բարձր գնահատանքով կը խօսէր: Յաճախ կը բաղդատէր իր երկիրը մեր երկրին հետ և ցոյց կուտար իրարու հակապատկեր բաներ, որոնք մեզ շատ կը զուարճացնէին:

(Շարունակելի)

Թրգմ. Պրանսերէնէ
Գ. ՊԱՐՍԱՄԵԱՆ



ՎԱԳԱՆՁԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սոյն վերնագրով կ'ուզենք հրատարակել քանի մը նամակներ մեր եղբոր Սամուէլ Պագգաւեանի աշակերտներէն ղրկուած իրենց վագանձի տեղերէն, ինչպէս՝ նաեւ անոնց պատասխանները, որոնք ցոյց կուտան մտերիմ եւ իտեալ յարաբերութիւնը փոխի եւ ժողովուրդի, ուսուցիչի եւ աշակերտի միջեւ: 8. Ն. Դ.

8 Յուլիս 1938

Սիրելի ուսուցիչ»,

Ցաւալի է այն լուրը որ լսեցի երեկ: Երբ Ե.ին նամակը սկսանք կարդալ շատ ուրախ էինք, բայց երբ եկանք սա խօսքին և կարդացինք. «Մեր քարոզիչը պիտի մեկնի Սիւրիա» բոլորս ալ շատ, շա՛տ տրտմեցանք այդ լուրին վրայ:

Երանի թէ ես ալ Կիրակի օրը Մարսէլ ըլլայի որպէսզի կարենայի ներկայ գտնուիլ ձեր բաժանման հանդէսին, դժբախտաբար հոն պիտի չըլլամ ոչ ալ 17 Յուլիսին:

Շատ շնորհակալ եմ որ դուք եղաք իմ ապաշխարութեանս պատճառը, վասնզի եթէ դուք չըլլայիք, կարելի է թէ առաջուան Սիրար-

փին պիտի ըլլայի: Աղօթեցէք ինծի համար որ հաւատարիմ մնամ մինչեւ ի մահ, և ես ալ ձեզի համար կ'աղօթեմ որ Տէրը ձեր հետը ըլլայ բոլոր ճամբորդութեան ընթացքին, որպէսզի Սիրբոյ մէջ շատ պտուղներ առաջ գան:

Այն բոլոր խրատները որ տուիք Ուրբաթ իրիկուն, զեռ միտքս են, երանի թէ կարենայի անգամ մըն ալ Ձեզ տեսնել, և եթէ զիրար ալ չտեսնենք, օր մը երկինքին մէջ զիրար պիտի տեսնենք, հոն ուր զիշեր ցորեկ պիտի երգենք և Յիսուսը պիտի տեսնենք մեր աչքերով:

Այն բոլոր պտոյտները, որ ըրած ենք Ձեզի հետ, զեռ թարմ են մտքիս վրայ մանաւանդ երբ Սէնթ-Անթուանէն քալելով եկանք, նոյնպէս բոլոր հանգէսները և խրատները: Շատ կը ցաւիմ, որովհետեւ ձեզի պէս ուսուցիչ և քարոզիչ չենք կրնար գտնել:

Այն գիրքը որ տուիք Շաբաթ իրիկուն, որպէս յիշատակ՝ կը պահեմ: Պատմութիւնը շատ գեղեցիկ էր, մէջը շատ դասեր կան: Երբ այդ գիրքը կարդացի, ես ալ Մարիամին և Հէնրիկոսին պէս փափաքեցայ Միսիոնարուհի ըլլալ: Հիմա կ'աղօթեմ ատոր համար:

Ներողամիտ կ'ըլլաք եթէ Ձեզ տրամեցուցած եմ: Միշտ Ձեզ պիտի յիշեմ և անդադար պիտի աղօթեմ Ձեզի համար:

Ընդունեցէք չերմ բարեւներս

Ձեր աշակերտուհին

ՍԻՐԱՐՓԻ

(Յայտ. Բ. 40)

Սէն-Լուի, 9 Յուլիս 1938

Սիրելի աշակերտս Ս.

Գիտե՞ս թէ որքա՛ն ուրախացուցիր զիս քու նամակովդ: Այնպէս կարծեցի թէ այդ պարզ տողերուդ մէջէն դուն ինքդ տաք և անկեղծ սրտով կը խօսիս հետս: Տէրը օրհնէ քեզ:

Գիտեմ թէ ամէն առաւօտ Սուրբ Գրոց հաւատարիմ աշակերտի մը պէս՝ Աստուծոյ օրհնեալ խօսքը կը կարդաս և Դանիէլի պէս կ'աղօթես օրը երեք հեղ ծնրադրելով. Դան. 9 10: Կը յիշես անշուշտ «անդադար աղօթք ըրէք» (Ա. թեա. Ե 17) ի շուրջ ձեզի տուած բացատրութիւններս ալ, թէ մենք կրնանք ուտելու և խմելու, խաղի եւ պտոյտի, հանգիստի կամ աշխատանքի, արցունքի և ժպիտի պահերուն իսկ «անդադար աղօթած» ըլլալ, եթէ միշտ, ամէն տեղ և ամէն բա-

նի մէջ Ա. Կորն. Ժ 31 համարին հոգիովը շարժինք: Այսպէս եթէ անդադար Տէրոջը բարի կամքը կատարելու և միշտ Անոր հաճելի դիրքին մէջ կենալու հոգ տանինք՝ ալ մեր հոգեւոր կեանքը վստահաբար ապահով, աճեցուն և պտղաբեր պիտի ըլլայ: Կ'արձեմ դուն էիր սիրելի Ս., որ 15 օր առաջուայ Սուրբ Գրոց մըձման առթիւ գրած էիր — «Հոգեւոր կեանքի մէջ յառաջ երթալու համար, Տէրոջը մէկ զաւակին պէտք է ամէն օր աղօթքով և Սուրբ Գիրք կարդալով սկսիլ, և ամէն բանէ առաջ ու ամէն բանի մէջ հարցնել՝ եթէ Յիսուս իմ տեղս ըլլար ի՞նչ պիտի ընէր»: Ամենամեծ Աստուածաբանն իսկ ասկէ աւելի գեղեցիկ պատասխան պիտի չկրնար գտնել այդ հարցումիս: Ուրեմն այդպէս ըրէ ամէն օր և Տէրը քեզի հետ պիտի ըլլայ, ինչպէս Յովսէփի, Դանիէլի և Դանիէլի հետ էր. Ծննդ. Լթ 2-3:

Բայց մի՛ մոռնար սիրելի Ս., ինչ որ վերջին իրիկունը ձեզի խօսեցայ, — այսինքն՝ պէտք է սիրել նաև բնութիւնը, որ Աստուծոյ պատկերազարդ մեծ գիրքն է: Եթէ Սուրբ Գիրքը մեր Հօր Աստուծոյն անհուն սէրը և յաւիտեանական փրկութիւնը կը յայտնէ Տէր Յիսուսով, բնութեան Գիրքն ալ Անոր անքննելի իմաստութեան եւ ամենակարող զօրութեանը վրայ կը խօսի մեզի: Ուստի ուրախ սրտով վայելէ զայն: Միշտ դիտէ կապոյտ երկինքը, որ պատկերն է Աստուծոյ խաղաղութեանը, Փիլ. Դ 4-7: Սեւեռաբեր նայիր աստղերուն և սորվիր անբիծ ու լուսատու ըլլալ անոնց պէս, Մատթ. Ե 14, Փիլ. Բ 15: Ականջ դիր թռչնոց դայլայլին, հովերու սոյլին, ջուրերու խրխռլին կամ արածուող կովերուն բոժոժներու ղողանջին ու սորվիր երգել, երգել Սաղ. 96: Ծաղիկ հաւաքած ժամանակդ մտաբերէ Բ Կորն. Բ 15ը: Երբ թիթեռ կը հալածես, արտասանէ Կող. Գ 1-2ը: Ազոաւներու երամները թող յիշեցնեն քեզի հրաշալիօրէն նախախնամուող մեծ մարգարէն և Մատթ. 2 25-34 համարներուն քաղցր պատգամը: Խորունկ, ջուր- շատ ձորերը թաւ-կանանչ, կամ ծաղկահիւս մարմանդը դաշտերուն՝ մեր միտքը կը ձգեն Սաղ. 23ը կամ «Բարի հովիւը և անոր հտեւէն զացող ոչխարները» Յով. 10ին: Լեռներուն նայիր և մտածէ



(Շարունակութիւնը տե՛ս կողքին 4րդ էջը)

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

ՔԵԶԻ ՓԱՌՔ ՊԵՏԻ ՏԱՄ

(Գերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.)



1 Քեզի փառք պիտի տամ
Պատիւ ամեն ժամ
Ով Տէր, Փրկիչ իմ կեանքիս
Հաստատ խարիսխն յայսիս:

Զի Դուն զիս փրկեցիր
Զեռքովդ սիրալիր
Ողորմութիւն ցոյց տուիր
Շնորհքով զիս ծածկեցիր:

2 Երնէ՛կ թէ ամէն ոք
Դիտնար այս մեծ շնորհք
Ճանչնար Քեզ ով Տէր Յիսուս,
Փրկուէր ճամբէն անյոյս:

3 Կրթէ զիս ով Տէր իմ
Որ ես ալ սիրեմ
Մեղքի տակ խիստ ճնշուածներ
Բերեմ զանոնք Քեզ Տէր:

4 Թէ որ Քու գործիդ զիս
Գործածել կ'ուզես,
Այրէ, սրբէ այս սիրտն իմ
Որ Քեզ ես գործակցիմ:

Սինայի ու Դողգոթայի, Կարմեղոսի ու Հերմոնի
(Մատթ. ԺԸ 1-8ը) վրայ կատարուած սրտայոյզ
դէպքերուն վրայ: Ամէն առաւօտ թարմ և զով
օղբ ծծէ լեցուն թոքերով, ու խնդրէ Տէրոջմէն
որ այսպէս լեցնէ քեզ Սուրբ Հոգիով: Ու թող
սար ու ձոր, դաշտ ու անտառ սորվեցնեն քեզի
երգել ու աղօթել, սիրել ու ծառայել Յիսուսի
նման:

Երբ հոս գաս (ինչպէս ըսած ես եղեր) ալ զիս

պիտի չտեսնես: Բայց Յիսուս միշտ քեզի հետ
է. Մատթ. ԻԸ 20: Հոս իրարմէ կը բաժնուինք,
սակայն երկինքի մէջ զիրար պիտի գտնենք
Յիսուսի քով, Ա. Թես. Դ 16: Մի մոռնար աղօթել
ինծի համար, ես ալ միշտ պիտի յիշեմ քեզ և
աղօթեմ քեզի համար:

Անկեղծ սիրով ուսուցիչդ

ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳՅԱԼԵԱՆ



ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՕՐ ՄԸ ՄԱՐՏԵՅԼԻ ՄԷՋ

Եկեղեցւոյս հովիւը շաբաթ մը առաջ, Յուլիս 3 ին ծանուց թէ յաղաջիկայ Կիրակին 10 Յուլիսին, մեր քարոզիչ՝ Սամուէլ եղբայր Պապականի Սուրբա բաժանման առթիւ միսիոնարական հանդէս մը պիտի ունենանք: Առտուն հովիւը միսիոնարութեան վրայ պիտի խօսի, իսկ կէսօրէ վերջը հանդէսը պիտի սարքուի: Ամէնքս ալ անհամբեր կ'սպասէինք օրուան: Կիրակին հասած էր: Առտուն հովիւը քարոզեց միսիոնարական ոգին և անոր արժէքին մասին, ցոյց տալով այն անկիւնադարձերը, որոնցմէ անցած է Մարտէյլի եկեղեցին 14 տարուան իր գոյութեան ընթացքին և վերջապէս շեշտ դրաւ այն կէտին թէ Տէրը զմեզ հոն բերած է, երբ ալ միսիոնարներ ալ պալու ենք: Յիշից թէ ներսէս եղբայր Խաչատուրեան ալս եկեղեցիի դաւակներէն մին, արդէն վեց տարիներէ ի վեր կը գտնուի Հալէպ, այսօր Տէրը մեր գաւակներէն երկրորդը, որ տարիներով մեր մէջ գործած օգտակարապէս, մեզմէ կը պահանջէ երթալու Միջագետք (Ճէզիրէ), հոն գտնուող քրդախօս հայերուն և քրդերուն մէջ Քրիստոսի Աւետարանին քաղցր աւետիսը բերելու: Ասիկա մեզի դժուար կուգայ երևութապէս, բայց Աստուծոյ հրամանն է, պէտք է հնազանդինք ու սիրով ալ կը հնազանդինք, ա. որովհետեւ ուրիշներ ալ Աւետարանին պէտք ունին և մենք պարտական ենք անոնց բերելու այդ Աւետարանը. Հռ. Ժ 14, 15: Բ. որովհետեւ եկեղեցին գործելով, մաշելով, զոհելով ու զոհուելով միայն կրնայ ապրիլ, և Քրիստոսի կամբը կատարել: Ուրեմն հարկ է ստածել, նաև պատրաստել մեր դաւակները եկեղեցիին այդ բարձրագոյն նպատակին համար: Եկեղեցիին կեանքը միսիոնարելու գործին հետ սերտ յարաբերութիւն ունի:

Կէսօրէ վերջ ժամը 3.30 ին տեղի ունեցաւ հանդէսը: Եկեղեցւոյ սրահը արդէն ժամանակին ծալրէ ի ծալր լեցուած էր: Մեր երիտասարդները գեղեցիկ մը զարդարած էին սրահը և ամպիոնին կողմը պատին վրայ խոշոր գրերով կը փայլէր «Քու. Թագաւարութիւնդ գայ» խօսքը: Երգէ և աղօթքէ ու ընթերցումէ յետոյ հանդէսը բացուեցաւ: Առաջին խօսողը եղաւ Վահան եղբայր

Սահակեան՝ նիւթ ունենալով «Քրիստոսի ծառայել» նիւթը: Շատ կուռ և լեցուն ճառ մըն էր զոր կարգաց և որուն մասին լսեցինք թէ «Բանբեր»ի մէջ պիտի հրատարակուի: Ուրեմն անոր վրայ ծանրանալ աւելորդ կը համարենք:

Երկրորդ խօսողը եկեղեցւոյ հովիւն էր, որ մասնաւոր քարտէս մը պատրաստած ըլլալով ցոյց տուաւ ժողովուրդին, անցեալի մէջ տեղի ունեցած Աւետարանական գործը քրդախօս հայերու մէջ, և անցաւ այն վայրերուն, ուր մեր քրդախօս եղբայրները այժմ կը բնակին խառնուած, քրդերու և քրդախօս ասորիներու հետ: Անոնց պիտի երթայ մեր Սամուէլ եղբայրը: Ապա քանի մը սրտաբուլիս և տաք խօսքերով ես. ԾԴ 2-3 ի վրայ ծանրանալով բարի ճանապարհ մաղթեց Սամուէլ եղբոր, մատնանշելով թէ հակառակ քաղ. անորոշութեանց, երբ Տէրը կը շրջէ զմեզ, պիտի հնազանդինք և մեր վրանի ցիցերը մինչեւ Հասիմէ պիտի երկարենք, քանզի Սամուէլ եղբոր հոն երթալով մեր Աւետարանին և մեր Փրկչին հետ մեր սրտերն ալ իր հետը կը տանի:

Վերջին խօսողը նոյնինքն Սամուէլ եղբայրն էր, որ նախ իր վկայութիւնը տուաւ: Պատմելով թէ ինչպէ՞ս հաւատացեալ ընտանիքի մը ծոցին մէջ ծնած է ի Տիգրանակերտ, մեծցած է ի Տէրէկ Քիրտիսթանի մէկ անկիւնը, բայց շուտով որբ մնալով զրկուած է Խարբերդ Մեղրէ և հոն քանի մը տարիներ ապրած, հոն արթնցած, վերջապէս Մարտէյլ եկած, հոն կրկին ապաշխարած և Տէրովմէ հրաւէր ընդունելով Զուրիցերիոյ Ս. Դրական դպրոցը կարդացած է և հոն իսկ հրաւէր ընդունած է երթալու միսիոնարական դաշտը:

Հանդէսը փակուելէ առաջ հովիւը ծանուց թէ առաւօտեան քարոզէն յետոյ եկեղեցւոյ Անդամական ժողով եղած էր և եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ առաջարկ եղած էր եկեղեցիին, Սամուէլ եղբայրը Մարտէյլի եկեղեցիին միսիոնարը սեպելով անոր ծախքերը վերցնելու հոգը ստանձնել, եկեղեցիով և ուրիշ եկեղեցիներու ու «Բանբեր»ի ընթերցողներու եղբայրական աջակցութեամբ: Եկեղեցին ընդունած էր այդ առաջարկը: Ուրեմն մեզի կ'իյնար մեր առաջին նուիրատուութիւնն ընել մեր միսիոնարին ճամբորդութեան առթիւ: Վերջէն լսեցինք որ 2000 ֆր. դրամ եկած էր, նոյնպէս գեղեցիկ պատկերահան գործիք մը նուիրուած էր մեր միսիոնարին եղբոր մը կողմէն:

Սոյն օրը Տէրը մեզ շատ օրհնեց:

ՆԵՐԿԱՅ ՄԸ